

Երևան – 2026 №1

ԲԵԺԱՆՈ

Տեղեկատու–հայրենագիտական
հանրագիտարանային հանդես

Հանդեսը պատմական փաստերով ներկայացնում է
Վրաստանի Հանրապետության Սամցխե–Ջավախք
մունիցիպալիտետի Բեժանո գյուղի անցյալը և ներկան:



Կաթնաղբյուրի ժամ

«Կաթնաղբյուրի ժամ» կրթողը ներառված է Վրաստանի Հանրապետության պահպանվող տարածքների ցուցակում:

Բեժանո (Բուժանո, Ծանճղա, Ջանջղա)
/ ԾՅՅԻՆՈ, ԾՅՅԻՆՈ / Beghano / Бежано /



Հայաբնակ գյուղ Վրաստանի Հանրապետության Ախալքալաքի շրջանում, շրջկենտրոնից 28 կմ հյուսիս–արևելք՝ $41^{\circ}36'28''N$ $43^{\circ}33'33''E$ կոորդինատներում: Ծովի մակարդակից բարձր է 1930 մետր (գյուղի սկզբնամասում), իսկ «Վանքում»՝ 1975 մետր:

Գյուղի առջև տարածված են ծաղկավետ հովիտը, մարգերն ու մարմանդները, արևելյան կողմում՝ մի շարք թմբեր ու բլրակներ: Գյուղը տարբեր կողմերից շրջապատված է լեռներով. հյուսիս–արևելյան կողմից՝ Մթին և Թակվետեյի, հարավից՝ Շավնաբադ, արևելքից՝ Աբու–Սամսարի լեռնաշղթայով, իսկ արևմուտքից՝ Թռեղքի լեռներով:

Գյուղը իր տարածքով հյուսիսից սահմանակից է Տաբաձուրի լճին, արևմուտքից Մոդեգամ, Բորժոմի շրջանի Չիխարուլա և Բալանթա գյուղերին, հարավից Ախալքալաքի շրջանի Ալաթուման և Ագանա գյուղերին:

Հին գյուղատեղի ավերակներից սկիզբ է առնում գետը՝ գյուղը բաժանելով երկու թաղամասերի. մի կողմում հինն է, իսկ ներքևում՝ նորը. գյուղացիները այն անվանում են Նորաշեն: 32 կմ հոսելով՝ գետը Ախալքալաքի մոտ միանում է Փարվանա (Թափարվան) գետին և թափվում է Կուր գետը:

Գյուղն ունի 3116 հա հողատարածք՝ որից 609 հա՝ վարելահողեր, մնացյալը՝ արոտավայր, խոտհարք և անտառ:



Ե ժ ա ն ո ն ու ն ի առատաբուխ և սառնորակ աղբյուրներ՝ նշանավորներից են գյուղի հարավ-

արևելյան կողմում բխող «Մեծ ակունքի» (աղբյուրի, գեգայի) կամ «Աղլղի» կոչվող աղբյուրների համալիրը, գյուղից 4 կմ դեպի արևելք բխող «Ղնդրալղի» սառնորակ աղբյուրը, «Մոնղոլիա» կոչվող հանդամասի «Քոչին», «Թարգի Խաչոյի» ակնաղբյուրը, «Չամուռը», «Կաթնաղբյուրը» և մի քանի աննշան աղբյուրներ:

Գյուղին է պատկանում Տաբաձղուրի լճի մի մասը, իսկ մինչև 19-րդ դարի վերջի 80-ական թվականները լիճն ամբողջովին եղել է Բեժանոյինը¹, իսկ գյուղի հարավում ստորերկրյա ջրերից գոյացել է Ագանայի լիճը (գել):

Գյուղը գտնվում է Ջավախքի բարձրավանդակի հյուսիսային կողմում, գյուղի տարածքը կազմված է պալեոգենի հրաբխային ապարներից՝ ծածկված լճագետային նստվածքներով: Ակտիվ երկրաշարժամետ շրջան է:

Կլիման չափավոր ցամաքային է, ձմեռը՝ երկարատև, գյուղում առաջին ձյունը տեղում է նոյեմբերի կեսից, այն մնում է մինչև մարտի երկրորդ կեսը, իսկ բարձրադիր վայրերում՝ նաև մինչև մայիս: Ամենացուրտ ամիսը հունվարն է, օդի նվազագույն ջերմաստիճանը լինում է մինչև -30 և ավելի ցուրտ, իսկ ամենատաք ամիսը հուլիսն է, ջերմաստիճանը լինում է +17, իսկ ցերեկները հասնում առավելագույնը +30 աստիճանի:

Տարեկան տեղումների միջին քանակը 1200 մմ է, ամենից շատ տեղումներ լինում են մայիս, հունիս և հոկտեմբեր ամիսներին:

Գյուղում կան երկու գերեզմանոց, մեկը՝ հյուսիսային մասում՝ Ակոենց տների միջակայքում, մինչև հիմա էլ այդ գերեզմանոցում պահպանվել են խաչքարեր, հուշասալիկներ և քանդակազարդ շիրմաքարեր: Իսկ 1961 թվականին Յոզունենց Ռուբիկի տան հարևանությամբ ստեղծվել է մեծ՝ 1,5 հա տարածքով գերեզմանոց: 1969 թ. այն ցանկապատեցին:



1. Լալայան Երվանդ, Ջավախք. նիւթեր ապագայ ուսումնասիրութան համար: Պատմական համառոտ տեսութիւն, Թիֆլիս, 1897, էջ 132:

**ԳՅՈՒՂԸ 19-ՐԴ ԴԱՐԻՑ ԸՆԴԳՐԿՎԵԼ Է
ՀԵՏԵՎՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ՝**

1828–1840 թթ. Ախալցխայի պրովինցիա (Ցարական Ռուսաստան),

1840–1846 թթ. Վրացա-Իմերեթական նահանգի Ախալցխայի գավառ, Ախալքալաքի տեղամաս (Ցարական Ռուսաստան),

1846–1867 թթ. Քութայիսի նահանգի Ախալցխայի գավառ, Ախալքալաքի տեղամաս (Ցարական Ռուսաստան),

1867–1874 թթ. Թիֆլիսի նահանգի Ախալցխայի գավառ, Ախալքալաքի պրիստավություն (Ցարական Ռուսաստան),

1874–1930 թթ. Ախալքալաքի գավառ,

1921–1991 թթ. Վրաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Ախալքալաքի շրջանի Կաջոյի գյուղական խորհրդի վարչատարածք,

1991–ից մինչև օրս Վրաստանի Հանրապետության Սամցխե–Ջավախք մարզի Ախալքալաքի մունիցիպալիտետ:



ԳՅՈՒՐԻ ՊԵՏՈՒԲՈՒՆԸ

Գյուղը մինչև 20-րդ դարի 80-ական թվականների վերջը կոչվել է նաև Զանջղա (Ճանճղա)^{2,3,4}, որը ժողովրդական ստուգաբանությամբ վրացերենից թարգմանաբար նշանակում էր «Զան ջուր» (Զան ծղալի), կա նաև բառի ձևափոխված երկրորդ տարբերակ, երբ գյուղացիները եկել են վերաբնակվելու, ըմպելով սառնորակ աղբյուրների ջուրը, որը ուներ բուժիչ հատկություն, ասել են Բուժանո: Անհայտ է մնում, թե երբ է Բուժանոն դառնում Բեժանո:

Բեժանոյի առաջին հիշատակություններից մեկը վերաբերում է 1124 թ., երբ գյուղը Բուժանո անվանաձևով հիշված էր որպես վրաց արքունական ամառանոց⁵:

XII դարի սկզբին վրաց Բագրատունիներից Դավիթ Շինարարը (1089–1125) և հայ գինական ուժերը կարողանում են սելջուկ թուրքերից ազատագրել Հյուսիսային Հայաստանի մեծ մասը, այդ թվում՝ Զավախքը: Այստեղ՝ Բուժանո (Բեժանո) գյուղում 1123 թ. վրաց թագավորին են ներկայանում Անիի բնակիչները, խնդրում իրենց քաղաքը ևս միացնել Վրաց պետությանը:

12-րդ դարի պատմիչ Անանունի «Դավիթ արքայից–արքայի պատմությունում» հիշատակվում է՝

... Յեվ ոգոստոսի քսանին Բուժանո աղբյուրների մոտ կանգն առած [Դավիթ թագավորի] մոտ յեկան Անեցի ավագները [դիվանա] յայտնեցին քաղաքն ու բերդերը նրան [Դավիթին] տալու մասին⁶:

Վ. Բագրատինն արքայագնի «Վրաստանի պատմություն (անհիշատակ ժամանակներից մինչև 15-րդ դար)»՝ 1744–ին հրատարակված աշխատությունում հիշատակվում է, որ 1125 թ. մայիսին Դավիթ թագավորը գրավեց Հայքի բերդերը: Հունիսին նա գրավեց Զավախեթը: Ապա օգոստոսի 20–ին Բուժանոյում թագավորին դիմեցին Անի քաղաքը գրավելու համար⁷:

Բեժանոն Բուժանո անվանաձևով հիշվում է նաև օսմանյան կառավարության 1595 թ. կազմած «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթար»-ում՝ որպես 12 տուն բնակչությամբ և ձիթհանով⁸ ու 10.000 ակչե հարկվող գյուղ⁹:

2. ՀԱԱ ֆ. 56, ց.1, գ. 3820, թ. 24:

3. ՀԱԱ ֆ. 53, ց.3, գ. 215, թ. 2:

4. ՀԱԱ ֆ. 53, ց.1, գ. 3841, թ. 93:

5. Քարտლის ցեղոջրեձա, ԵՊՄԻՏԻ ԸԱԸԳԵՆԻԼԻ ԿՅԵԼԱ ժԻՐԻՏԱԸԸ ՆԵԼՆԱՄԵՐԻՏԻ ՄԻՆԵԸԸՅԻՏ Ս. ԿԱՅՆՈՒՅՎԻԼԻՏԻ ՄԻԵՐ, ՏՈԸԼԻՏԻ, 1955, էջ 344:

6. Մեխքսեթ–Բեկ Լևոն, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր 1 (Ե–ԺԲ դար), Երևան, 1934, էջ 218:

7. Մեխքսեթ–Բեկ Լևոն, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Գ (ԺԸ–ԺԹ դար), Երևան, 1955, էջ 42:

8. Դավթյան Ավետիս, Հայկական և հայախառը բնակավայրերը Վրաստանում, Երևան, 1997, էջ 78:

9. “Գյուրջիստանի շիլադեթի լճի ԸԱՅՏԱՐԻ”, էջ 195::

Գյուղը նոր զարգացում և վերածնունդ է ապրում, երբ 1828-ին, ըստ տոհմաճառերի և տարեցների հիշատակման, իսկ պատմականորեն 1830 թ. մայիսին Յողունենց Մանուկի առաջնորդությամբ, 37 ընտանիք Արևմտյան Հայաստանի Էրզրում քաղաքից և Էրզրումի վիլայեթի Թոփալ-Չավուշ, Ջինիս, Երկան Մասուր, Յոզբեկ (Էզբակ), Բուլտենք՝ Բաղդատից և այլ գյուղերից եկել ու վերաբնակություն են հաստատել այսօրվա Բեժանոյում:




ԱՎԱ ԱՅԴ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԱՌԱՋԻՆԸ ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ԳՅՈՒՂՈՒՄ՝


- 1) Ալեքսանենք,
- 2) Ակոենք,
- 3) Արդենենք,
- 4) Արզումանենք (եկել են Կորխից),
- 5) Արթենենք,
- 6) Ավեսենք,
- 7) Բարսեղենք,
- 8) Բգոենք,
- 9) Բուլդենք,
- 10) Թամամենք,
- 11) Թարզի Խաչոենք,
- 12) Թոփչենք,
- 13) Ըփունենք,
- 14) Խանսուլենք,
- 15) Խումարենք,
- 16) Կարոենք
- 17) Համբոենք,
- 18) Մանուշակենք,
- 19) Մատոենք,
- 20) Մարոենք,
- 21) Մովսեսենք (Թաթոսենք),
- 22) Մելքոնենք (Տերտերանք),
- 23) Մըկնենք,
- 24) Մըկոենք,
- 25) Մկրտչենք,
- 26) Յայլոենք,
- 27) Յողունենք,
- 28) Շեփոենք,
- 29) Չարչոնք,
- 30) Ջինիսենք,
- 31) Ջ(Ճ)նկլենք,
- 32) Փասխալանք,
- 33) Փիլոենք,
- 34) Քցենք,
- 35) Օպլենք,
- 36) Օվանեսենք (Բիջոենք),
- 37) Օպլեսենք:

Դրանից հետո գյուղում դարբին չլինելու պատճառով Ախալցխայից հրավիրել են Աղաջանին՝ հիմնադրելով Դեմերչոնց տոհմը: Մինչև այժմ գյուղում եղել են կամ այլ վայրերից տեղափոխվել են 54 ազգատոհմ:


Տոհմաճառեր



Տոհմաձառեր



Տոհմաճառեր



Բեժանոն Ջավախքի 1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժից առավել տուժած գյուղերից էր, քանի որ 122 տնից մնացել են միայն 6-ը, 89-ը բոլորովին քանդվել են, 26-ը՝ մասամբ¹⁰:

Իսկ Ա. Դավթյանի վկայությամբ՝ գյուղի 125 բնակելի տներից 117-ը քանդվել են, կանգուն են մնացել միայն 7 տուն: 1160 բնակչից զոհվել են 48-ը և 2362 գլուխ անասուններից կոտորվել 169-ը¹¹:

Քանդվել են գյուղի եկեղեցին և դպրոցը: Գյուղի տների վերականգման համար մեծ օգնություն է ցուցաբերել Ալեքսանդր Մանթաշովի աղջիկը, նրա միջոցներով կառուցվել են բոլոր տուժածների, այդ թվում՝ Մելքոնյան Սիմավոնի, Փասխայան Մկրտիչի, Փիլոսյան Աղասինի և այլոց տները:

Երկրաշարժից տուժածներին օգնություն ցուցաբերող կոմիտեի հատկացրած միջոցներով 1902 թ. Բեժանոյում կառուցվել են յուրաքանչյուրը 600 ու արժողությամբ 10 տուն:

Բոլոր գյուղացիները որպես օգնություն ստացել են նաև 60 տոննա սերմնացու, 30 զույգ եզներ, նույնքան էլ՝ կով, 200 ոչխար:



Այդ աղետալի երկրաշարժի մասին վառ վկայություններ է թողել ջավախքցի գյուղագիր, Վահան Տերյանի ավագ եղբայր Ջավախեցին (Ղազարոս Սուքիասի Տեր-Գրիգորյան), ով լինելով տեղում, ականատես է եղել, թե ինչ ավերակների է վերածվել գյուղը և այդ մասին թղթակցություններ է գրել «Մշակ» թերթի մի քանի համարներում¹², իսկ հետագայում՝ 1900 թվականին Թիֆլիսում հրատարակել է «Ջավախքի աղետը: Ականատեսի տպատրուբիններից (19 դեկտեմբերի 1899)» գիրքը:

10. Մշակ, 1900, №4, 11 յունվարի, էջ 2:

11. Դավթյան Ավետիս, Հայկական և հայախառը բնակավայրերը Վրաստանում», Երևան, 1997, էջ 79:

12. Մշակ, 1900, յունվարի 19, №10, յունվարի 28, №17, փետրվարի 17, №31, մարտի 2, №40:

ԱՄՍԳԻՆ ԱՇԽԱՐՀԱՆՈՒԿ ԵՒ ԲՈՒՐՔԱԿԱՆ ՆԵՐՒՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղետալի երկրաշարժից դեռ ուշքի չեկած, վրա հասավ Առաջին համաշխարհային պատերազմի արհավիրքը, բեժանոցիները անմասն չմնացին այդ պատերազմին: ՌԴ պաշտպանության նախարարության արխիվներից ինձ հաջողվեց պարզել 21 բեժանոցու մասին տեղեկություն, ովքեր մասնակցել ու վիրավոր վերադարձել են կամ՝ անհայտ կորել:


ԲԵԺԱՆՈՑԻՆԵՐԻՑ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ 21 ՀՈԳԻ

Ազգանուն, անուն, հայրանուն	Ջինկոչումը	Ծառայելու վայր (ստորաբաժանումը)	Երբ է գորացրվել (ծառայության ավարտը)
Ալեքսանյան Ալեքսան Ստեփանի	կրտսեր ենթասպա	հետևակային Սոլխումի 203-րդ գունդ:	ոնմատիզմ հիվանդության պատճառով 27.07.1915 թ. գորացրվել է:
Ալեքսանյան Աղաբաբ Մանուկի	ավագ ենթասպա	Նոր Բայազետի 217-րդ գունդ:	սայջարդի (կոնտուզիայի) պատճառով 08.08.1916 թ. գորացրվել է:
Ալեքսանյան Աղաբեկ Մանուկի	կրտսեր ենթասպա	հետևակային Սոլխումի 203-րդ գունդ:	հիվանդության պատճառով 23.01.1915 թ. գորացրվել է:
Ալեքսանյան Աղաբեկ Ալաբեկի	կրտսեր ենթասպա	հետևակային Սոլխումի 203-րդ գունդ:	հիվանդության պատճառով 19.10.1914 թ. գորացրվել է:
Ալեքսանյան Գեղամ Ալեքսանի		հետևակային պահեստային 132-րդ գումարտակ:	06.06.1915 թվականին վիրավորվել է:
Արզումանյան Արսեն Ներսեսի	զինվոր	Կովկասյան բրիգադի չորրորդ 109-րդ գումարտակ:	հիվանդության պատճառով 06.08.1917 թ. գորացրվել է:
Արզումանյան Վաղյամ Աղաբեկի	շարքային	պահեստային 270-րդ գունդ:	վիրավորվելու պատճառով 05.04.1917 թ. գորացրվել է:
Բաբայան Կիրիկոշ	շարքային	հետևակային Բոգորոյան 209-րդ գունդ:	սայջարդի (կոնտուզիայի) պատճառով 26.06.1916 թ. գորացրվել է:
Գալստյան Հակոբ Պողոսի	շարքային	հետևակային Կուրիսյան 79-րդ գունդ:	Լոզի գյուղում 12.06.1915 թ. սայջարդ (կոնտուզիա) է ստացել:
Գևորգյան Հակոբ	շարքային	Ֆինլանդական հրաձգային 4-րդ գունդ:	հիվանդության պատճառով 15.01.1916 թ. գորացրվել է:
Դեմուրյան Ղևոնդ Հովհաննեսի	շարքային	առաջնագծային տրանսպորտի Կովկասյան 1-ին բանակային կորպուս:	
Հարությունյան Համբարձում	շարքային	Ֆինլանդական հրաձգային 4-րդ գունդ:	
Պալյան Սարգիս Պողոսի	շարքային	հետևակային Նավագիսյան 78-րդ գունդ:	հիվանդության պատճառով 15.01.1916 թ. գորացրվել է:
Սահակյան Մաթոս Պողոսի	շարքային	հետևակային Նավագիսյան 78-րդ գունդ:	10.12.1914 թվականին Էրզրումի նահանգի Օթթի քաղաքում 20-րդ հետևակային դիվիզիայում վիրավորվել է:
Սարգսյան Հարություն	շարքային	ռազմական երկաթուղային 1-ին ջոկատ:	19.06.1916:
Ստեփանյան Խաչատուր Սահակի	շարքային	Կարսի բերդային հետևակային 1-ին գունդ:	հիվանդության պատճառով 01.10.1917 թ. գորացրվել է:
Վանցյան Հակոբ		հետևակային Ցարիցինի 146-րդ գունդ:	զերեվարվել է:
Վանցյան Միշաբ Բարդուղիմոսի	շարքային	հետևակային Կուրիսյան 79-րդ գունդ:	
Վանցյան Սուրեն Վարդանի	շարքային	պահեստային 110-րդ գումարտակ:	հիվանդության պատճառով գորացրվել է:
Տեր-Բերդրով Սլրոյիչ Արշակի	շարքային	Պենզայի հրաձիգային առաջին դրոժինա:	վիրավորվելու պատճառով 09.07.1916 թ. գորացրվել է:
Քցյան Ստեփան Թոմասի	շարքային	հետևակային Լաիշենսկի 305-րդ գունդ:	Ուկրաինայի Վոլոդի մարզի Մանսիեի շրջանի Կոստոյիկևովա գյուղում 23.06.1916 թ. սայջարդ (կոնտուզիա) է ստացել:

ԱՐՄ ԽՈՒՐՈՎԵՐՈՋԱՆ



Սրբություններ



Գյուղում կան նաև այլ սրբություններ, որոնք պահպանվում են գյուղացիների տանը:

Գյուղի սրբություններից են՝ Կարմիր Ավետանը կամ Ավետարանը (Օպլենց Սանդրիկի տանը), Շեկ Ավետանը (Մկոյնեց Միշայի տանը), Նարեկը (Մկոյնեց Միսաքի տանը) և Ամենայն փրկիչը (Թարգի Խաչոնեց Շալիկոյի տանը, կրանց տանն են նաև երկու կաշեկազմ եկեղեցական գրքեր, մեկը՝ Մատթեոսի Ավետարան, 880 էջ, մանրանկարներով զարդարված, ութաձայլ, բանբակյա թղթի վրա բոլորգրով գրված է. «Յովսէս յերկինս ի գրչաց և անաբժան արունսարաորաց սուր անուն քահանանս յերկիրս Բաջբերունեաց ի զնդարադարս Ականց կոչեցեալ ընդ հովանեալ գեղեցկաշէն փաճարիս Թաղէնայ առաքայլի Սուրբ Յակովբի հայրապետի և սուրբ Սարգսի զօրավարի և Ծիրանաւոր սուրբ Աստուածածնի, ի առաջնորդութեան երկիրս և մերս զաւարի քաջ և արի Բարունասպետի և ուղղափառ քաջ և արի Բարունասպետի Յովհաննէս վարդապետի և Տէր Յովհաննէս եպիսկոպոսի, ՚ի հայրապետութեան Հայոց Տէր Լուսարակէս՝ ի թուին Հայոց ՋԺԵ (1466) ամին և խանութեան Ջիանշային, որ այս երկու ամէ զբարեկունի յոթի արարս ի վերայ խանին և նաև ոչինչ կարացան ամենը: Ապա յիշատակելով անտարանի գնողին՝ շարունակում է.

Արդ՝ շնորհիվ փեսան և նորին կապարեացի զպարգասն Տեառն Աստուծոյ ինոյ թագաւորի յի քի որ է արհեստայ յաշիրեսն: Իսկ ի բառնայ թագաւորի Հայոց մեծաց և փիրեկ աշխարհին վրաց թագաւորին անգար ցրեալ յարարչէն ել ազգն նեպողաց որոյ անուն կոչի թաթար, մարաղէն գագան, չադակեր, որ ուրբէին գնիս մարդոյ իբրև գանասանյ, խուժաղուժ ազգ, եկն աշխարհն Հայոց և առ բազում բերդերս և բազում քաղաքնս և յանինայ կոտորեց զայրս և զկանայս և եղև մեղանդ գնանկունս, և փարածեցաւ աստուածասար բարկութիւնս ընդ ամենայն աշխարհս. այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց: Իսկ Աստուած զթացաւ յիւր ծառայքս թէպէտ և մեղատոր էակք բայց իւր սրեղծած էար դաղերեցուց զբարկութիւնն. միթէ դառնացար ի մեղաց և ոչ դարձար այլ առաւել յորդորեցան ի գործ պոռնկութեան ի շնութիւն, ի ազահութիւն, ի սպանութիւն, ի անասնութիւն, յընչասիրութիւն, ի արծաթսիրութիւն. իսկ առաջինքն զարարածս ձեռաց իւրոց պաշարէին վաշխս և փոկոսս, զորքս գրկէին, զաղբարս լացնէին. եղև քահանայն իբրև գնի ժողոճորդեմէն և առաջնորդն խոցարոյղ և ոչ թժշկող, և հարկս փային անասրէն ազգին և ծառայ գրվէին և յաստուծոյ ոչ վախէին և ի մեղաց ոչ դադարէին այլ հարկին պարտաւանաւք գիրկին թէ սարեկ կամէին և եւ առաւել մեղանչեցայ այնքան զամենեանս և եղև մեղովս գնանն (?) չար քան գառաօխն. իսկ աստուծոյ ոչ հանդուրժել այսն ամենայնի այլ յարոյց գանասրէն գագանն ընդ ամենայն փրեզերս յանինայ կոտորեցին զքահանայն և զկրանատորս և գաննէլ մանկունս և լայր մայրս առ որդիս իւր, և որդիս առ հայրս իւր և ոչ որ՝ որ թողլոյ դնասս. անդ էր ողբոց և լայոց արժանի մարգարէին երևանային յերանց թէ ընկերոք ի վերայ մեր և բլրոց թէ ծածկեցէք զմեզ. իսկ ի թուականիս եղև սով սասարիկ ի Մեղիփրին հայոց մեծաց քաղաքի որ մայրն զպղայն կուրլըր, ու զխորն ու գաննայն ժմանք, իբրև զհաց կուրլէին: Ճշմարտապէս պարանեցին թէ երեք ընկեր ի ճանապարհի միով երթային երկու ի մի խորհուրդ եղին և զընկերն իւրեանց կերին և եր մեզ աստվածասար բարկութիւնս որ եղև, իսկ փրուպս և անարժանս Սարգիս ամենայն մեղաց լի զբրեճալ ՚ի դառն փանջանաց եկի յերկիրս կիլիկեցոց ի յաստուածաւեր և բարեպաշտ թագաւորին Հեթոնյ և ... գրեցի ... գտորք աներարանս ... Ապա ինդորոս յիշել իրեն և իւր ծնողներին»

Գրքի առաջին էջին գրված է ՏԹՅ կամ ԱՐՈՒ տառերը վերջում տարբերված, գրքերը շատ վառ վիճակում են և հնարավոր է մոտ ժամանակներս սնկային հիվանդությունից այլևս հնարավոր չլինի ընթերցել:

Ար. Մինաս եկեղեցին



Գյուղի եկեղեցին հիմնադրվել է 1830-ական թվականներին, կրում է Սուրբ Մինաս անունը, ում սափն, ի դեպ, հիշատակված է «Վարք Սրբոց» գրքում:

Եկեղեցին կառուցված է մոխրագույն տուֆից, սկզբնապես եղել է քարաշեն և փայտածածկ:

Պատկանում է սրահային տիպին: Ընդհանուր չափսերն են 18,72x10,64 մ: Հարավային և հյուսիսային պատերին բացված են կիսաշրջանաձև պատուհաններ: Երկու

մուտքերը հարավային և արևմտյան կողմերից են: Հարավային մուտքի վերևում խաչքար է քանդակված, իսկ արևմտյանում խաչաձև քանդակ: Մուտքի աջ կողմում հայերեն արձանագրություն է. «ՍՈՒՐԲ ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑԻ 1906 թ.»: Եկեղեցու թեք տանիքը թիթեղածածկ է: Առաստաղը կանարաձև է: Ներքին տարածքում պատերը սվաղված են և ներկված: Արևելյան մասում կառուցված է խորանը, որի աջ ու ձախ կողմերում ավանդատներ են: Հյուսիսային պատին տեղակայված է մկրտության ավազանը: Տանիքի արևմտյան մասում գանգակատուն է:

Համաձայն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի եկեղեցիների 1840-ի տեղեկագրի՝ «Ար. Մինաս» եկեղեցու ծխականների թիվը եղել է մոտ 196:

1899-ի երկրաշարժից բավականին վնասվել է՝ դառնալով վթարային կառույց: Գրեթե խոնարհված եկեղեցու փոխարեն, նույնությամբ, նախկինից մի քիչ վերև կառուցվել է նույնանուն նորը՝ 1906 թ.-ին:

Եկեղեցու օժանդակ էջմիածնից հատուկ հրավիրվել են Խաչիկ Վարդապետը և Գյումրու «Յոթ Վերք» եկեղեցուց երկու վարդապետ, պատարագի քավորը եղել է Դենրբչոնց Գևորգը, ով գոհարերել է 2 եզ և 6 ոչխար, եփելով երկու տեսակի ճաշ՝ մեկը մսով ու կաղամբով, մյուսը բլդուրով և արիշտայով, իսկ քավորը եկեղեցուն նվիրարերել է 50 ռուբլի և մի շքեղ խաչ, որը տաճարում պահվել է մինչև 1923-ը:


Չխատեր քահանաներ. Գյուղի Սուրբ Մինաս եկեղեցու քահանաներից են եղել Գրիգոր քին. Տեր-Քերոբյանցը, Գրիգոր քին. Սարգսյանը, Հակոբ քին. Քերոբյանցը, ովքեր քահանայագործել են 1860-1870 թթ.:

Եկեղեցին ամբողջ Խորհրդային ժամանակաշրջանում փակված է եղել, ժամանակ առ ժամանակ օգտագործվել է որպես պահեստ, իսկ 2006-2007 թթ. ընթացքում Վասիլ և Վիկտոր Լյովայի Սարգսյանների բարեգործությամբ մաքրվեց, նորոգվեց, հարդարվեց և պարսպապատվեց: 2007-ի օգոստոսի 17-ին վերածովեց գյուղի Սուրբ Մինաս եկեղեցին:

*Վանք
Եկեղեցական համալիր*




Բեժանոյի հարավ-արևելյան կողմում, գրեթե 3 կմ հեռու, բարձր բլրալանջին պահպանվել են սրբատաշ քարով կառուցված հին բնակավայրի ավերակներ, այն տեղացիները անվանում են սուրբ Հովհաննես Վանք (V-VIII դդ.), շուրջը կան գերեզմանքարեր, պահպանվել են եկեղեցու սրբատաշ տուֆաքարերով պատերի հիմքերը: 2001-ին Յայլոյան Վրեժի հովանավորությամբ, Յայլոյան Միծղարը թափթված քարերով վերակառուցեց փոքրիկ եկեղեցանման մատուռ, ուր ուխտի են գալիս ոչ միայն մեր գյուղացիները, այլև շրջակա գյուղերից ու տարբեր տեղերից՝ զոհաբերելով թոշուններ կամ կենդանիներ:



Սուրբ Հովհաննեսի անվան «Վանք» եկեղեցական համալիրի հատակագիծը:

Վանք

Հայտնի հնավայրում պահպանվում են սրբատաշ քարով կառուցված մեկ այլ եկեղեցու հիմնապատեր: Ճարտարապետական բեկորներից մեկի երեսին խաչաքանդակի շուրջ պահպանվել է մետրոպատառ հինգ տողով արձանագրություն:



... ԹՆՆՏ ... | ... | ... Դ Է... | ... ՏՆ Ժ... |

ՄԵՏՐՊՊԱՏԱՌ ԶԲԿԳ ՏՈՂՈՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ «ՎԱՆՔՈՒՄ» ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ:
Առաջին անգամ հրատարակել է Ս. Կարապետյանը, Ջավախք, Գիրք Թ, Երևան, 2006, էջ 115:

«Վանքի» բլրի վրա գտնվող ավերակը՝ շուրջը բնակարանների հիմքեր, գերեզմանաքարեր: Կան քարերի մեջ երկու մետր երկարությամբ փորված դազաղներ, որոնց կափարիչը քարից է, կանսարանն և սրնուն է դազաղի կողքերին փորված սկոսների մեջ: Դազաղներից մեկի մեջ եղել են երեք զանգ և մեկ սուր:



**ԲԵՃԱՆՈՅԻ ԶԵ ԿՈՍԻԱՍՐԱՆԵՐԻ
ԱՆՎԱՆ ԿՈՆՏԵՏԱՊԵՅՈՒՆ**



Լուսանկարում պատկերված են՝

վերևի շարք, ձախից աջ՝ Յողունյան Երջանիկ, Մկոյան Գրիշա, Յայլոյան Լյուովիգ, Ստեփանյան Զորքին, Պապոյան Օնես, Փիլոսյան Իրակլի (Կոմիսար), Մաթևոսյան Անդրանիկ, միջին շարք՝ Գրիգորյան Դարչո, Սահակյան Թորգոմ, Խուդավերդյան Մկրտիչ, Ստեփանյան Ստեփան, Գրիգորյան Սերգո, Յողունյան Մամո, Խանսուլյան Վարդան, 1-ին շարք (նստած)՝ Մկրտչյան Վաչագան, Նիկողոսյան (Չարչյան) Արուսյակ, Ավետիսյան Շուշանիկ, Թամամյան Մաշո, Մարտիրոսյան Մամիկոն, Մաթևոսյան Վաչագան:

Գյուղում 1929-ին կազմակերպվեց կոլտնտեսություն (առաջին նախագահ՝ Համազար Մելքոնյան), 1929-ի վերջից մուտքը կոլտնտեսություն կատարվում էր կամովին հիմունքներով, ինչը շարունակվեց մինչև 1939 թ. վերջը:

ԲԵՃԱՆՈՅԻ ԿՈՆՏԵՏԱՊԵՅԱՆ ԵՄԻՍԱՆԵՐ ԵՆ ԵՈՒԼ

Մելքոնյան Համազար Սերոբի – 1929–1930,
 Խանսուլյան Սարգիս Հարությունի – 1930–1931,
 Վանցյան Մովսես Վարդանի – 1931–1933,
 Նահապետյան Միսաք (Վաչիանից) – 1933–1935,
 Թամամյան Տիգրան Սիմանի – 1935–1936,
 Մանուկյան Գալուստ Ներսեսի – 1936–1938,
 Թադևոսյան Արշալույս – 1938–1939,
 Մելքոնյան Համազար Սերոբի – 1939–1945,
 Գրիգորյան Սերգեյ Կարապետի – 1945–1946,
 Թորոսյան Արտաշ (Մեծ Սամսարից) – 1947–1949,
 Խուդավերդյան Մկրտիչ Սերգոյի – 1949–1960,
 Արզումանյան Հովհաննես (Օնիկի) Վառլամի – 1960–1964,
 Մկոյան Միշա (Միխայիլ) Աղանիկի – 1964–1965,
 Սահակյան Թորգոմ Մաթևոսի – 1965–1966,

Փամիսուխյան Սրապ (Մոդեգամից) – 1967–1968,
 Սարգսյան Միտուշ Արտաշեսի – 1968–1969,
 Խուդավերդյան Շալիկո Բագրատի – 1969–1971,
 Փասխալյան Վոլոդյա Արշալույսի – 1971–1975,
 Մակարյան Կիրով (Ալաթունանից) – 1975–1980,
 Գրիգորյան Լյովա Դարչոյի – 1980–1987,
 Ավետիսյան Լավիկ (Սամվել) Սարգսի – 1987–1988,
 Յողունյան Ռոբերտ Մեխակի – 1988–1990,
 Խուդավերդյան Վարազդատ Շալիկոյի – 1990–1993
 (1991-ին կոլխոզը լուծարվեց, սակայն մինչև 1997 թ. նախագահի պաշտոնը ձևականորեն պահպանվել էր),
 Փասխալյան Արշալույս Շալիկոյի – 1993–1994,
 Ավետիսյան Լավիկ (Սամվել) Սարգսի – 1994–1995,
 Յողունյան Շալիկո Վարշամի – 1995–1997:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՂԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել են 270 մարդ, 130-ը չեն վերադարձել իրենց օջախներ՝ զոհվելով կամ անհայտ կորելով: Գնդապետի կոչման են արժանացել Արշալույս Ղազարյանը, Ստեփան Փիլոսյանը, Սլավիկ Փիլոսյանը և Օննիկ Մկոյանը:

Ոչ մի բանով չենք կարող ամոքել մեր գյուղից զոհված 130 զավակների կորստյան վիշտը: Նրանք այլևս չկան, սակայն նրանցից ամեն մեկի վատ անունը և անմահ հոգին միշտ մեր հիշողության մեջ կմնա և մենք՝ նրանց սերունդները, պետք է վատ պահենք նրանց հիշատակը:

Ու քանի դեռ կան այդ զոհվածների հարազատները ու նրանց ժառանգները, երբեք մեր հիշողությունից չի ջնջվի նրանց անմահ անունները:

**Փանոթ հերոսներին, փանոթ հավերժական,
Որոնք փրկեցին հողը և անմահացան:
Բայց ինչո՞ւ է պեպր այդ փառքը նրանց,
Մեռած քաջերին,
Ինչ պիտի անեն այդ փառքը նրանք՝
Հավիտյան քնով լուռ քնածները
Եվ իրենք իրենց չփրկածները:
Թեպետ այդ ընկածներից
Բոլորը չէ, որ հերոս են եղել,
Բայց փառք բոլորին,
Փառք հավերժական:
Հիշենք բոլորին անուն առ անուն
Եվ հիշենք ցավով,
Դա մեռածներին պեպր չէ, ես գիտեմ,
Բայց սպորողներին շար է հարկավոր ...**

(Ռոբերտ Ռոժդեսարվենսկի)



Հայրենական մեծ պատերազմում զոհված բեմանոցիների հիշատակը հավերժացնող հուշարձան
Հովանավորել է Միրուշ Սարգսյանը, կառուցել՝ Աղաս Մուսիկյանը (Կաճո):

1	Ալեքսանյան	Մերոպ	Մերգելի	67	Մանուշակյան	Վարշամ	Խնկիանուի
2	Ալեքսանյան	Վաղինակ	Մերգելի	68	Մելքոնյան	Հակոբ	Գևորգի
3	Ավետիսյան	Սարգիս	Երվանդի	69	Մելքոնյան	Վաչագան	Աղանիկի
4	Արզումանյան	Նժդեհ	Մուրենի	70	Մելքոնյան	Վարդգես	Գևորգի
5	Արզումանյան	Վահրամ	Հակոբի	71	Մելքոնյան	Օսնիկ	Գևորգի
6	Բաբայան	Մկրտիչ	Լևոնի	72	Մկոյան	Աղասի	Ստեփանի
7	Բարսեղյան	Հակոբ	Մենեքերիմի	73	Մկոյան	Գուրգեն	Հարությունի
8	Գաբրիելյան	Հրանտ	Ավետիքի	74	Մկոյան	Խաչատուր	Հմայակի
9	Գալստյան	Դարչո	Նիկողոսի	75	Մկոյան	Օսնիկ	Հարությունի
10	Գալստյան	Ղազարոս	Խնկիանուի	76	Մկրտչյան	Արշալույս	Մինասի
11	Գրիգորյան	Աղասին	Գրիգորի	77	Մկրտչյան	Բագրատ	Մինասի
12	Գրիգորյան	Անդրանիկ	Գրիգորի	78	Մկրտչյան	Խորեն	Հակոբի
13	Գրիգորյան	Գառնիկ	Թադևոսի	79	Յայոյան	Արտաշես	Սահակի
14	Գրիգորյան	Երջանիկ	Գառնիկի	80	Յայոյան	Գալուստ	Մկրտիչի
15	Գրիգորյան	Երջանիկ	Հարությունի	81	Յայոյան	Գրիգոր	Մկրտիչի
16	Գրիգորյան	Մկրտիչ	Գառնիկի	82	Յայոյան	Զարմար	Կարապետի
17	Գրիգորյան	Ռաֆիկ	Աբրահամի	83	Յայոյան	Պապո	Սահակի
18	Գրիգորյան	Սյամիկ	Հարությունի	84	Յողունյան	Աղասի	Ալեքսանի
19	Գրիգորյան	Օսնիկ	Աբրահամի	85	Յողունյան	Արամ	Կարապետի
20	Գևորգյան	Դարչո	Հակոբի	86	Յողունյան	Արմենակ	Հմայակի
21	Գևորգյան	Մամիկոն	Հակոբի	87	Յողունյան	Վարդան	Սիրականի
22	Դեմուրչյան	Արշալույս	Համբոյի	88	Յողունյան	Օսնիկ	Մելիքի
23	Դեմիրձյան	Արտավազ	Գևորգի	89	Նիկողոսյան	Գրիգոր	Նիկողոսի
24	Զատիկյան	Մյասնիկ	Հարությունի	90	Նիկողոսյան	Վոլոյոյա	Արսենի
25	Զատիկյան	Վահրամ	Հարությունի	91	Չարյան	Դարչո	Կարապետի
26	Թամամյան	Տիգրան	Սիմավոնի	92	Չարյան	Մամիկոն	Հարությունի
27	Թովսյան	Մելքոն	Մամբրեի	93	Պայան	Արշալույս	Հարությունի
28	Թովսյան	Պապո	Թադևոսի	94	Պայան	Խաչատուր	Հարությունի
29	Թովսյան	Սուրեն	Տոնականի	95	Պայան	Շաքրո	Մերգոյի
30	Լուսարարյան	Բագրատ	Մերգելի	96	Պայան	Պոռոս	Հարությունի
31	Լուսարարյան	Գարեգին	Դավթի	97	Պայան	Սուրեն	Խաչատուրի
32	Խաչատրյան	Խաչիկ	Կարապետի	98	Պայան	Վասիկո	Ղազարոսի
33	Խաչատրյան	Մամիկոն	Մերգոյի	99	Պապոյան	Անդրանիկ	Եղիշեի
34	Խաչատրյան	Միսաք	Գրիգորի	100	Պապոյան	Դարչո	Ստեփանի
35	Խաչատրյան	Վաղինակ	Գրիգորի	101	Պապոյան	Սարգիս	Զորքիսի
36	Խաչատրյան	Վարդոս	Սարգսի	102	Պապոյան	Վաչագան	Բագրատի
37	Խաչատրյան	Վոլոյոյա	Վաղինակի	103	Պողոսյան	Խորեն	Սամուկի
38	Խաչատրյան	Օսնիկ	Վաղարշակի	104	Պողոսյան	Շաքրո	Տոնականի
39	Խուդավերդյան	Բագրատ	Աղաբեկի	105	Զինիսյան	Վաղինակ	Սիմավոնի
40	Խուդավերդյան	Կիմիկ	Բագրատի	106	Զինիսյան	Խաչատուր	Հարոյի
41	Խուդավերդյան	Շաքրո	Մերգելի	107	Ռաֆիկյան	Վասիկո	Աբիսողոմի
42	Կարապետյան	Արշակ	Սիրականի	108	Սարգսյան	Շաքրո	Արտաշեսի
43	Կարապետյան	Վաստ	Հարությունի	109	Վանցյան	Անդրանիկ	Սիրեկանի
44	Կարոյան	Արամ	Ղևենի	110	Վանցյան	Արտաշես	Բարդուղի
45	Համբարյան	Արշակ	Գալուստի	111	Վանցյան	Արտաշես	Թադևոսի
46	Համբարյան	Ղազարոս	Բագրատի	112	Վանցյան	Հրաչյա	Նիկողոսի
47	Հարությունյան	Աբեթնակ	Հմայակ	113	Վանցյան	Մամիկոն	Թադևոսի
48	Հարությունյան	Անդրանիկ	Մենեքերիմի	114	Վանցյան	Շաքրո	Թադևոսի
49	Հարությունյան	Միսաք	Հակոբի	115	Վանցյան	Պարույր	Հարությունի
50	Հարությունյան	Նուրիջան	Մամբրեի	116	Վանցյան	Ստեփան	Թադևոսի
51	Հարությունյան	Պլատոն	Հակոբի	117	Վարդևանյան	Աղասին	Սիրականի
52	Հարությունյան	Վարդան	Բարդուղի	118	Վարդևանյան	Արշալույս	Արմինակի
53	Ղազարյան	Անդրանիկ	Ղազարոսի	119	Ունանյան	Զարմար	Կարապետի
54	Ղազարյան	Արմենակ	Ղազարոսի	120	Փասխայան	Աղվան	Արշալույսի
55	Ղազարյան	Գեղամ	Մուրենի	121	Փասխայան	Անդրանիկ	Մկրտիչի
56	Ղազարյան	Լևոն	Հակոբի	122	Փասխայան	Ավետիք	Մկրտիչի
57	Ղազարյան	Մելրոժա	Մակարի	123	Փասխայան	Արշալույս	Հարությունի
58	Ղազարյան	Վաչագան	Սաղաթելի	124	Փասխայան	Գուրգեն	Հարությունի
59	Ղազարյան	Վարշամ	Սաղաթելի	125	Փիլոսյան	Արշալույս	Աղասու
60	Մաթևոսյան	Ղազարոս	Բարդուղի	126	Փիլոսյան	Արտաշես	Գալուստի
61	Մաթևոսյան	Մերգո	Աղանիկի	127	Քերոբյան	Պերճ	Երվանդի
62	Մանուշակյան	Արտավազ	Խորենի	128	Քցյան	Անդրանիկ	Մարքիոնի
63	Մանուշակյան	Բաբլ	Մեղրակի	129	Քցյան	Զարմար	Պարսամի
64	Մանուշակյան	Երջանիկ	Խնկիանուի	130	Քցյան	Կրաս	Վանոյի:
65	Մանուշակյան	Հրաչյա	Մեղրակի				
66	Մանուշակյան	Պարսամ	Մեղրակի				

«Հայրենական մեծ պատերազմի առաջին աստիճանի» շքանշանով են պարգևատրվել 13 բեժանոցի, Մկրտչյան Սիմոնը և Հարությունյան Վարդոն՝ նաև «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշանով, իսկ Լեդայրներ Գրիգորյան Գարեգինը և Սերգեյը նաև «Կարմիր աստղի» շքանշանով:

Գալստյան Երջանիկ Նիկողոսի - ծնված 1919 թ. - պարգևատրվել է՝ 06.11.1985 թ.,

Գալստյան Սրեհան Նիկողոսի - ծնված 1923 թ. - պարգևատրվել է՝ 06.11.1985 թ., իսկ 03.06.1944 թ. պարգևատրվել է նաև «Փառքի III աստիճանի» շքանշանով,

Գրիգորյան Գարեգին Կարապետի - ծնված 1909 թ. - պարգևատրվել է՝ 06.11.1985 թ., իսկ 06.08.1946 թ. պարգևատրվել է նաև «Կարմիր աստղի» շքանշանով,

Գրիգորյան Սերգեյ Կարապետի - ծնված 1919 թ. - պարգևատրվել է՝ 06.11.1985 թ., իսկ 06.08.1946 թ. պարգևատրվել է նաև «Կարմիր աստղի» շքանշանով,

Զափիկյան Վաչագան Հարությունի - ծնված 1908 թ. - պարգևատրվել է՝ 01.08.1986 թ.,

Կարապետյան Երջանիկ Միքայելի - ծնված 1922 թ. - պարգևատրվել է՝ 06.04.1985 թ.,

Կարապետյան Երջանիկ Սիրեկանի - ծնված 1920 թ. - պարգևատրվել է՝ 06.04.1985 թ.,

Հարությունյան Վարդո Վահանի - ծնված 1923 թ. - պարգևատրվել է՝ 21.02.1987 թ., իսկ 13.04.1991 թ. պարգևատրվել է նաև «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշանով,

Հովսեփյան Սերգեյ Պողոսի - ծնված 1924 թ. - պարգևատրվել է՝ 21.02.1987 թ.,

Մկրտչյան Միսաք Երվանդի - ծնված 1925 թ. - պարգևատրվել է՝ 01.08.1986 թ.,

Մկրտչյան Սիմոն Մուշեղի - ծնված 1915 թ. - պարգևատրվել է՝ 01.08.1986 թ., իսկ 06.04.1985 թ. պարգևատրվել է նաև «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշանով,

Պալյան Աղասին Սարգսի - ծնված 1924 թ. - պարգևատրվել է՝ 06.11.1985 թ.,

Բջյան Շաքրո Կարապետի - ծնված 1923 թ. - պարգևատրվել է՝ 06.11.1985 թ.:

«Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշանով են պարգևատրվել 27 անձ, Արզումանյան Աղվանը՝ նաև «Խիզախության համար» մեդալով, իսկ Հարությունյան Վարդոն և Մկրտչյան Սիմոնը՝ նաև «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի» շքանշանով:

Արզումանյան Աղվան Հարությունի - ծնված 1913 թ. - պարգևատրվել է՝ 06.04.1985 թ., իսկ 07.03.1944 թ. պարգևատրվել է նաև «Խիզախության համար» մեդալով,

Արզումանյան Հովհաննես (Օնիկ) Վաղյանի - ծնված 1921 թ. - պարգևատրվել է՝ 13.11.1943 թ.,

Արզումանյան Պերճ Երեմի - ծնված 1922 թ. - պարգևատրվել է՝ 06.04.1985 թ.,

Գալստյան Վարդան Նիկողոսի - ծնված 1924 թ. - պարգևատրվել է՝ 06.04.1985 թ.,

Գևորգյան Ռաֆիկ Հակոբի - ծնված 1924 թ. - պարգևատրվել է՝ 06.04.1985 թ.,

Թադևոսյան Շաքրո Սերգեյի - ծնված 1920 թ. - պարգևատրվել է՝ 06.04.1985 թ.,

Թովհյան Դանիել Իսախիրունի (Իսուֆի) - ծնված 1918 թ. - պարգևատրվել է՝ 06.04.1985 թ.,

Թովհյան Հասնազասպ Իսախիրունի (Իսուֆի) - ծնված 1915 թ. - պարգևատրվել է՝ 01.08.1986 թ.,

Խանասույան Երջանիկ Գուրգենի - ծնված 1924 թ. - պարգևատրվել է՝ 06.04.1985 թ.,

Խուդավերդյան Մկրտիչ Սերգոյի (Սերգեյի) - ծնված 1917 թ. - պարգևատրվել է՝ 06.04.1985 թ.,

Խուդավերդյան Օնիկ Սերգոյի (Սերգեյի) - ծնված 1924 թ. - պարգևատրվել է՝ 06.04.1985 թ.,

Խուդավերդյան Յուլի Ալեքսանի - ծնված 1911 թ. - պարգևատրվել է՝ 21.02.1987 թ.,

Հարությունյան Վարդո Վահանի - ծնված 1923 թ. - պարգևատրվել է՝ 13.04.1991 թ., իսկ 21.02.1987 թ. պարգևատրվել է նաև «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի» շքանշանով,

Ղազարյան Արշալույս Լևոնի - ծնված 1926 թ. - պարգևատրվել է՝ 06.04.1985 թ.,

Մկրտչյան Գրիգոր Հնայակի - ծնված 1915 թ. - պարգևատրվել է՝ 06.04.1985 թ.,

Մկրտչյան Սիմոն Մուշեղի - ծնված 1915 թ. - պարգևատրվել է՝ 06.04.1985 թ., իսկ 01.08.1986 թ. պարգևատրվել է նաև «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի» շքանշանով,

Յայրյան Երջանիկ Մկրտչի - ծնված 1923 թ. - պարգևատրվել է՝ 06.04.1985 թ.,

Յողունյան Վաչագան Սիրականի - ծնված 1906 թ. - պարգևատրվել է՝ 01.08.1986 թ.,

Չարչյան Գարեգին Միսաքի - ծնված 1922 թ. - պարգևատրվել է՝ 06.11.1985 թ.,

Պալյան Աղվան Արմենակի - ծնված 1926 թ. - պարգևատրվել է՝ 06.04.1985 թ.,

Պասպյան Արսեն Զենեթի - ծնված 1920 թ. - պարգևատրվել է՝ 06.04.1985 թ.,

Պողոսյան Աննան (Էմմա) Տոնականի - ծնված 1911 թ. - պարգևատրվել է՝ 06.04.1985 թ.,

Սահակյան Գրիգոր Վանոյի - ծնված 1913 թ. - պարգևատրվել է՝ 06.04.1985 թ.,

Սարգսյան Մկրտիչ Արուշի - ծնված 1918 թ. - պարգևատրվել է՝ 06.04.1985 թ.,

Վանցյան Աղասին Թադևոսի - ծնված 1910 թ. - պարգևատրվել է՝ 06.04.1985 թ.,

Վանցյան Լորենց Պարույրի - ծնված 1924 թ. - պարգևատրվել է՝ 06.11.1985 թ.,

Բցյան Օնիկ Զարնարի - ծնված 1925 թ. - պարգևատրվել է՝ 06.11.1985 թ.:

«Փառքի երրորդ աստիճանի» շքանշանով են պարգևատրվել երկու մարդ՝

Գալստյան Սյրեհան Նիկողոսի - ծնված 1923 թ. - պարգևատրվել է՝ 03.06.1944 թ., իսկ 06.11.1985 թ. պարգևատրվել է նաև «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի» շքանշանով,

Պալյան Վասիկո Ղազարոսի - ծնված 1919 թ. - պարգևատրվել է՝ 20.06.1944 թ.:

«Կարմիր աստղի» շքանշանով են պարգևատրվել եղբայրներ՝

Գրիգորյան Գարեգին Կարապետի - ծնված 1909 թ. - պարգևատրվել է՝ 06.08.1946 թ., իսկ՝ 06.11.1985 թ. պարգևատրվել է նաև «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի» շքանշանով՝

Գրիգորյան Սերգեյ Կարապետի - ծնված 1919 թ. - պարգևատրվել է՝ 06.08.1946 թ., իսկ 06.11.1985 թ. պարգևատրվել է նաև «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի» շքանշանով:

Հայրենական պատերազմում զուղացիներից գերեվարվել են՝

Թովչյան Դանիել Իսախիրունի - գերվել է 25.05.1942 թ., հեղու ազատ է արձակվել,

Խուդավերդյան Յուսկ Ալեքսանի - գերվել է 03.11.1942 թ., հեղու ազատ է արձակվել,

Լուսարարյան Բագրատ Մերգելի - գերվել է 22.07.1942 թ., սպանվել զերության մեջ 16.12.1942 թ.,

Յայրյան Երջանիկ Մկրտչի - գերվել է 1945 թ. փերվարին, հեղու ազատ է արձակվել,

Չարչյան Դարչո Կարապետի - գերվել 10.07.1942 թ. սպանվել Խարկովի N°110842 համակենտրոնացման ճամբարում 24.10.1942 թ.,

Բցյան Սահակ Ալեքսանի - գերվել է 22.06.1942 թ., հեղու ազատ է արձակվել:

Գերվել են նաև՝ Գրիգոր Պարույրի Վանցյանը, Բենիամին Մամբրեի Յողունյանը, Ավետիք Հովհաննեսի Բցյանը և Ստեփան Նիկողոսի Գալստյանը, ով պարգևատրվել է «Փառքի առաջին և երկրորդ», «Կարմիր աստղի» շքանշաններով և բազմաթիվ մարտական մեդալներով: Բազմազավակ ընտանիքի հայր է, ունեցել է 13 երեխա, իսկ կինը՝ Գոհար Գալստյանը պարգևատրվել է «Հերոսուհի մայր» ոսկե մեդալով:

ԲՆԺՃԱՆՈՅԻ ԴՎԱՐՈՅՐ

Այն սպիտակ, որը անցյալի մոռացված էջերում չի պեղում իր նախնիների
բողոքի հերթերը, նրանց ընթացած կյանքի ողորկ,
Գրի չի առնում իր պատմությունը, նա
դատարարական է հավերժ մոռացություն:

.....
Անցյալի պատմությունը մի լուսատու-լատու է,
որ ամեն մի ժողովուրդի շնորհիվ է ունենալ իր ճամփան
անմոռո դնալու համար:

Հովհաննես Թումանյան



Մեր գյուղի դպրոցի մասին առաջին հիշատակությունը, ըստ Հայաստանի ազգային արխիվի տվյալների, վերաբերում է 1863 թվականին, երբ բացվում է Սբ. Մինասի արական մեկդասյա եկեղեցական-ծխական դպրոցը և տվյալ պահին աշակերտների թիվը եղել է 54, (1865–ին՝ 47 էր)¹³:

1866–ին սկսում է գործել ուսումնարան, որտեղ արդեն սովորում էին 54 աշակերտ: Ուսումնարանն ուներ երկու ուսուցիչ, եկեղեցու տնօրեն՝ Գրիգոր քահանա Տեր-Քերոբյանը և Հակոբ քահանա Տեր-Քերոբյանը, ովքեր քահանայագործել են 1860–1870–ական թթ., թաղված են գյուղի հին գերեզմանոցում, պահպանվել են նրանց տապանաքարերը՝ հայերեն արձանագրությամբ:


Հայտնի է, որ 1891 թ. Արշակ քահանա Գալստյանի առաջարկությամբ որոշվում է վերակառուցել Մկոյենց Գալուստի օդան և դարձնել երկու սենյականոց կրթօջախ: Գյուղացիներն սկսում են հանգականություն:

Ներսիսյան դպրոցի ուսումնական խորհրդի որոշմամբ շրջանավարտները ավարտական փաստաթուղթ էին ստանում միայն այն դեպքում, եթե երկու տարի անվարձ աշխատեին կրթության բնագավառում՝ հայկական բնակավայրերում:

Բեժանո է գալիս Լևոնը (ազգանունը հայտնի չէ)՝ ծագումով դարաքիլիսցի (այժմ՝ Վանաձոր): Լևոն վարժապետը գոմի օդաներում գաղտնորեն անվճար և անվարձ գրաճանաչություն է սովորեցնում գյուղի մոտ հիսուն մանուկների: Նրան ամեն օր հերթով կերակրում էր գյուղի ընտանիքներից մեկը:

1896 թ. բեժանոցիները ինդրագիր են ներկայացնում թեմակալ առաջնորդին, որպեսզի նա հոգա գյուղում դպրոց բացելու համար, միաժամանակ հավաստիացնելով, որ պատրաստ են իրենց ծախսերով կառուցելու դպրոցական շենքը:

(դիմումը ստորագրել են 70 մարդ, այդ թվում գյուղի քահանա Գրիգոր Տեր-Գալստյանը, բայց այն մնացել է անհետևանք)¹⁴:



**Արխիվային փաստաթուղթ
ճանճղա գյուղի դպրոցական
շինության մասին (Հայաստանի
Ազգային արխիվ, ֆոնդ 53, ցուցակ
1, գործ 4055, թերթ 2):**

13. ՀԱԱ ֆ. 53, ց. 1, գ. 3977, թթ. 55–56,

14. ՀԱԱ ֆ. 53, ց. 1, գ. 21–24

1906 թ. գյուղում բացվում է ռուսերեն ուսուցմամբ մեկդասյա դպրոց: Դասավանդումը կատարվում է Մկոյենց Գալուստի և Էքանենց օղաներում:

1907 թ. եկեղեցու կողքին Մկոյենց Գալուստի օղայում կառուցվում են առաջին երկու սենյակից և մեկ նախասենյակից բաղկացած դպրոցական շենքի պատերը: Գալուստ քահանա Գալստյանը օսերից գնում է մի փայտաշեն գոմ՝ դպրոցական շենքը ծածկելու համար, սակայն փայտանյութը չի բավականացնում, և շենքի կառուցումն ավարտվում է 1921-ից հետո:

1917-ի օգոստոսի 7-ին Վրաստանի թեմական առաջնորդի անունով, Ամենայն Հայոց Գևորգ Ե Կաթողիկոսի №1330 կոնդակով. «արտօնուեց. իր միջնորդութեան համաձայն, բանալ Ախալքալաքի Ճանճղա գիւղում հայոց ծխական դպրոց»¹⁵:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո գյուղում կազմակերպվում է լիկկայան՝ անգրագիտության վերացման (լիկվիդացիոն) կայան, որտեղ սովորում էին մեծահասակ տղամարդիկ և կանայք, պարապմունքները տեղի էին ունենում այն գյուղացիների տանը, որոնք ունեին մեծ օղաներ:

1923 թ. գյուղում գործում էր տարրական նորաբաց դպրոց, որի առաջին ուսուցիչն ու վարիչն էր քահանա Արշակ Գալստյանը:

Դրանից հետո հաջորդ տեղեկությունը վերաբերում է 1927-ին, երբ դպրոցը դառնում է 7-ամյա, ուներ հինգ դասասենյակ, 100 աշակերտ, դասերը անցկացվում էին երկու հերթով:

1954-ին կոլտնտեսության նախագահ Մկրտիչ Խուդավերդյանի նախաձեռնությամբ կառուցվում է դպրոցի միահարկ շենք՝ տասը դասասենյակներով և կաբինետներով:

1957-ին կրթօջախը դառնում է ութամյա: 1967-ին Բեժանոյի դպրոցը դառնում է միջնակարգ: 1968-ին տալիս է առաջին շրջանավարտները: Առաջին դասարանցիների դաստեղծ եղել է Սուսաննա Սահակյանը, իսկ շրջանավարտներինը՝ Աղասի Ավագյանը (Լոմատուրցիից):

Շրջանավարտների դասարանական վիճակական՝ տե՛ս ՖՈՏՈԱՐԽԻՎ բաժնում:

1988 թվականին գյուղի սկզբնամասում կառուցվեց նորակառույց եռահարկ արդիական տիպային դպրոցի շենքը:

15. Արարատ, Մայր Աթոռի պաշտոնական ամսագիր, Էջմիածին, 1917, Ծ տարի, սեպտեմբեր-դեկտեմբեր, №10-ԺԲ, էջ 675:

Խորհրդային տարիներին և Ետխորհրդային ժամանակամիջոցում դպրոցի տնօրեններ կամ վարիչներ են եղել՝

- 1923 - 25 թթ. Արշակ Գալստյանը,
- 1925 - 26 թթ. Աղասի Մալխասյանը,
- 1927 - 28 թթ. Գրիշա (Գրիգոր) Ուլյանը,
- 1928 - 33 թթ. Արշակ Գալստյանը,
- 1934 - 35 թթ. Տիգրան Հակոբյանը,
- 1935 - 36 թթ. Արտավազ Բարսեղյանը,
- 1936 - 37 թթ. Վաչիկ Մինասյանը,
- 1937 - 38 թթ. Արես Ժամկոչյանը,
- 1938 - 41 թթ. Վահագն Փամփուխչյանը,
- 1941 - 42 թթ. Գևորգ Լույուկյանը,
- 1942 - 43 թթ. Երջանիկ Գալստյանը,
- 1943 - 50 թթ. Հովսեփ Մանասյանը (Վարևանից),
- 1950 - 54 թթ. Սարգիս Զուռնաջյանը (Խանդոյից),
- 1954 - 59 թթ. Հովհաննես (Օննիկ) Արզումանյանը,
- 1959 - 61 թթ. Հակոբ Անտոնյանը,
- 1961 - 79 թթ. Հովհաննես (Օննիկ) Արզումանյանը,
- 1979 - 2006 թթ. Կիմ Մանուկյանը,
- 2006 - 2009 թթ. Արևիկ Դանիելյանը,
- 2009 - 2020 թթ. Գառնիկ Գրիգորյանը:
- 2020 - 2022 թթ. Ռուանդ Դեմուրչյանը,
- 2022 թ. սեպտեմբերի 15-ից ցայսօր՝ Յուրա Յայլոյանը:



Բեժանոյի դպրոցի երկարամյա տնօրեններ Օննիկ Արզումանյանը և Կիմ Մանուկյանը (ձախից աջ):

Ցայժմ դպրոցում դասավանդել են՝

Ը Թ Ե	Ազգանուն, անունը	Ծննդավայրը	Երբ է դասավանդել	Մասնագիտությունը
1	Աբոյան Իսմայիլ	Բարալեթ		մաթեմատիկա և ֆիզիկա
2	Ալեքսանյան Վարշամ Վարշամի	Կաճո		քիմիա և կենսաբանություն
3	Աղալարյան Արտյուշ Իրակլու	Ղարղլար		օտար լեզու
4	Այվազյան Շուշանիկ		1945 - 1950	
5	Անանիաշվիլի Ալեքսանդր			
6	Անտոնյան Հակոբ Վասիլի	Չիխարուլա	1952 - 1955	աշխարհագրություն
7	Առաքելյան Սերյոժա Լևոնի	Լոմատուրցիս	1968 - 1974	հայոց լեզու և գրականություն
8	Առաքելյան Օֆելյա Սերյոժայի	Չիխարուլա	1984 - 1996	ինֆորմատիկա
9	Ավագյան Աղասի	Լոմատուրցիս		աստղագիտություն և աշխարհագրություն
10	Ավետիսյան Տաթևիկ Սամվելի	Բեժանո		հայ ժողովրդի պատմություն
11	Ավետյան Մարինե Հարությունի	Ազավիեթ	2011 - ից մինչև օրս	մաթեմատիկա
12	Արզումանյան Հասմիկ Հովհաննեսի	Բեժանո		
13	Արզումանյան Հովհաննես Վաղամի	Բեժանո	1948 - 1979	պատմություն
14	Բարբառյան Վեներա Աղասիի	Չխորոճուր, ՎՀ	1967 - 1995	ռուսաց լեզու և գրականություն
15	Գալստյան Արշակ Իսկիհանուսի	Բեժանո	1940	ռուսաց լեզու և գրականություն
16	Գալստյան Երջանիկ Նիկողոսի	Բեժանո	1940	մաթեմատիկա և ֆիզիկա
17	Գրիգորյան Աղունիկ Վարդանի	Բեժանո		
18	Գրիգորյան Անժելա Գարեգինի	Բեժանո		գերմաներեն
19	Գրիգորյան Արևիկ Պետրոսի	Բեժանո	1992 - ից մինչև օրս	տարրական դասարանների դասվար
20	Գրիգորյան Գառնիկ Վալերիկի	Բեժանո	1989 - 2021	աստղագիտություն
21	Գրիգորյան Ժուժումնա Շալվայի	Ազարա, ՎՀ	1985 - 1997	ռուսաց լեզու և գրականություն
22	Գրիգորյան Շամիկ Դարչոյի	Բեժանո	1990 - 20...	քիմիա և կենսաբանություն
23	Գրիգորյան Վանիկ Գարեգինի	Բեժանո	1956 - 1995	պատմություն
24	Գևորգյան Քնարիկ Անդրանիկի	Բեժանո	2009 - 2020	հայոց լեզու և գրականություն
25	Դանիելյան Արևիկ Վազգենի	Բերդ, ՀՀ	1985 - ից մինչև օրս	հայոց լեզու և գրականություն
26	Դեմոպյան Լեյլա Արամի	Տաբաթղուրի	2008 - 2014	տարրական դասարանների դասվար
27	Դեմոպյան Ռոլանդ Երջանիկի	Բեժանո	1978 - 2022	ռազմագիտություն
28	Դեմոպյան Վարդուհի Շաքրոյի	Տաբաթղուրի	2009 - 2015	տարրական դասարանների դասվար
29	Զեղզինիժե Մարիա Վասիլի	Բալանթա	1957 - 1982	վրացերեն
30	Զոռնաջյան Սարգիս Ստեփանի	Խանդո	1950 - 1954	հայոց լեզու և գրականություն
31	Թամամյան Սիմավոն Ժորժիկի	Բեժանո	1982 - 1991	կերպարվեստ և նկարչություն
32	Լույսլվյան Գևորգ	Գանձա	1940	
33	Լույսլվյան Լարիսա Գևորգի	Գանձա		հայոց լեզու և գրականություն
34	Խանտուկյան Թամարա Երջանիկի	Բեժանո	1979 - ից մինչև օրս	երգեցողություն
35	Խաչատրյան Ֆարիադ Միխակի	Լոմատուրցիս	1985 - 1990	քիմիա և կենսաբանություն
36	Խոտլավերդյան Ալյոշա Հովհաննեսի	Բեժանո	1971 - 1995	մաթեմատիկա
37	Խոտլավերդյան Խաչիկ Սերգոյի	Բեժանո	1949 - 1966	մաթեմատիկա
38	Խոտլավերդյան Տանյա Մկրտիչի	Բեժանո	1973 - 1979	քիմիա
39	Կարապետյան Ազնիվ		1940	
40	Կարապետյան Գոհար Արտաշի	Բեժանո	1987 - 1989	քիմիա
41	Կարապետյան Շոթա Բաբկենի	Կաճո		ռազմագիտություն
42	Կարոյան Գրետա Ռազմիկի	Մասունիկ, ՀՀ		ռուսաց լեզու և գրականություն

43	Կոյունյան Լարիսա Հմայակի	Բարալեթ		վրացերեն
44	Կոյունյան Լենա Հմայակի	Բարալեթ		գերմաներեն
45	Համբարյան Սմիրան Արշալույսի	Բեժանո	1974 - 2012	հայ ժողովրդի պատմություն
46	Համբարյան Արմանուշ Լյովայի	Բեժանո	1991 - 1993	
47	Համբարյան Լյովա Արշալույսի	Բեժանո	1965 - 2001	հայոց լեզու և գրականություն
48	Ղանդոյան Կլարա Աշխարհաբեկի	Մերենիա		
49	Ղուկասյան Աննա Հարությունի	Ալաստան	1945 - 1982	հայոց լեզու և գրականություն
51	Ղուշյան Իսկուհի Մնացականի	Մերենիա	1988 - ից մինչև օրս	հայոց լեզու և գրականություն
52	Մաթևոսյան Սիրան Վանիկյայի	Բեժանո	1993 - 1996	տարրական դասարանների դասվար
53	Մակարյան Կիրով Երեմի	Ալաթուման		քիմիա և կենսաբանություն
54	Մանուկյան Գայանե Կիմի	Բեժանո	1971 - 1995	լաբորանտ-քարտուղարուհի
55	Մանուկյան Կիմ Գալուստի	Բեժանո	1951 - 2009	մայրենի լեզու և գրականություն
56	Մանուկյան Նինա Մանուկի	Բեժանո	1968 - 1971	տարրական դասարանների դասվար
57	Մարտիրոսյան Անահիտ Աղասիի	Ղուշչի, ՎՀ		գերմաներեն
58	Մելոնյան Նաիրա Հմայակի	Խորենիա	1992 - ից մինչև օրս	քիմիա և կենսաբանություն
59	Մելքոնյան Ռուբեն Համազարի	Բեժանո		ավտոգործ
60	Մկոյան Արտաշ Գրիգորի	Բեժանո	2007 - ից մինչև օրս	ավտոգործ և աշխատանքի ուսուցում
61	Մկոյան Գուաննա Արտաշի	Բեժանո	2011 - ից մինչև օրս	վրացերեն լեզու
62	Մկոյան Լյովա Կարապետի	Բեժանո	1985 - 2000	ֆիզկուլտուրա
63	Մկոյան Խաչատուր Էդիկի	Բեժանո	2017 - ից մինչև օրս	ֆիզկուլտուրա
64	Մկոյան Խաչատուր Գրիգորի	Բեժանո	1969 - 2000	ֆիզիկա
65	Մկոյան Վարդենիկ Վալիկի	Բեժանո	1973 - 2010	գրադարանավար
66	Մկոյան Քնարիկ Լյովայի	Բեժանո	2004 - 2014	հայոց լեզու և գրականություն
67	Մուսիկյան Լուսինե Իլյուշի	Կաճո		գերմաներեն
68	Յայլոյան Յուրա Գալուստի	Բեժանո	2015 - ից մինչև օրս	երգ ու պար
69	Յողունյան Բենիամին Մամբրեի	Բեժանո	1940 - 1941	ռազմագիտություն
70	Յողունյան Մյանսիկ Խաչատուրի	Բեժանո	1969 - 2011	ավտոգործ և աշխատանքի ուսուցում
71	Յողունյան Ռոբերտ Մելիակի	Բեժանո	1952 - ...	աշխարհագրություն և պատմություն
72	Նիկողոսյան Անահիտ Գրիշի	Բեժանո		հայոց լեզու և գրականություն
73	Չթյան Օֆելյա Ալեքսանի	Բարալեթ	2021 - ից մինչև օրս	հայոց լեզու և գրականություն
74	Պալյան Հասմիկ Գևորգի	Բեժանո	1982 - 1997	տարրական դասարանների դասվար
75	Պապոյան Անդրանիկ Բագրատի	Բեժանո	1990 - 2001	աշխարհագրություն
76	Սահակյան Մարգուշ Թորգոմի	Բեժանո	1959 - 1962	տարրական դասարանների դասվար
77	Սահակյան Սահանդուխտ Թորգոմի	Բեժանո	1975 - 2005	կերպարվեստ
78	Սահակյան Գրիգոր Վանոյի	Բեժանո	1938 - 1968	պատմություն և հայոց լեզու
79	Սահակյան Շաղիկ Արշալույսի	Ազանա	1991 - 2001	մաթեմատիկա
80	Սահակյան Սուսաննա Թորգոմի	Բեժանո	1958 - 1965	պատմություն և աշխարհագրություն
81	Սարգսյան Արտաշես Միտուշի	Բեժանո		
82	Սարգսյան Լյովա Մկրտիչի	Բեժանո	1967 - 1995	մաթեմատիկա
83	Սարգսյան Մկրտիչ Արտաշեսի	Բեժանո	1939 - 1978	աշխարհագրություն
84	Սողալյան Սոֆյա Հարությունի	Բեժանո		
85	Ստեփանյան Հայկանուշ Ստեփանի	Բեժանո		ջոկատավար
86	Սուքիասյան Մարգարիտա Հակոբի	Գոգարան, ՀՀ	1949 - 1966	ռուսաց լեզու և գրականություն
87	Վանցյան Անիկա Սիրելյանի	Բեժանո	1946	
88	Վանցյան Աշոտ Շոթայի	Բեժանո	2000 - 2003	մաթեմատիկա
89	Վանցյան Հռիփսիմե Լորենցի	Բեժանո	1975 - 1979	քիմիա
90	Վանցյան Շալիկո Մովսեսի	Բեժանո	1979 - ...	աշխատանքի ուսուցում

Ուսուցիչներ

91	Վարդանյան Մարիամ Հարությունի	Մյասնիկյան, ՎՀ	1968 - 1994	հայոց լեզու և գրականություն
92	Վարդանյան Վանիկ Գարեսինի	Բեժանո	2011 - ից մինչև օրս	հայ ժողովրդի պատմություն
93	Տիտոյան Անժելա Մնացականի	Մողեզամ	2015 - ից մինչև օրս	հայոց լեզու և գրականություն
94	Ուլյան Գրիգոր Մկրտիչի	Վարևան		պատմություն
95	Փամփուխչյան Կարինե Ալեքսանդրի	Բորժոմի	1983 - 1984	ռուսերեն և վրացերեն
96	Փամփուխչյան Վահագն		1940	
97	Փասխայան Մարինե Միսաքի	Դամալա	2013 - ից մինչև օրս	գրադարանավար
98	Փասխայան Վոլոդյա Արշալույսի	Բեժանո	1969 - 1985	քիմիա և կենսաբանություն
99	Փիլոյան Թամազի Ռաֆիկի	Բեժանո	1988 - 2014	մաթեմատիկա
100	Փիլոյան Ռաֆիկ Թամազի	Բեժանո	2015 - մինչև օրս	մաթեմատիկա
101	Քցյան Կարինե Վախկոյի	Սամտրեդիա	1994 - մինչև օրս	ռուսաց լեզու և գրականություն
102	Քցյան Սերգեյ Ռուբենի	Բեժանո		ռուսաց լեզու և գրականություն
103	Քցյան Սուսաննա Սրապի	Բեժանո	1994 - ից մինչև օրս	մաթեմատիկա



Բեժանոյի մի խումբ ուսուցիչներ կողմնօնության նախագահ Մկրտիչ Խուղավերդյանի հետ:

Վերևի շարք, ձախից աջ՝ Նիկողոսյան Անահիտ, Սուբիասյան Մարգարիտա, Արզումանյան Օննիկ, Անտոնյան Հակոբ (Զիխարուլայից), Մանուկյան Կիմ, Դուկասյան Աննա, անհայտ:

Միջին շարք՝ Սարգսյան Մկրտիչ, Յողունյան Դարչո, Խուղավերդյան Խաչիկ, Զուռնաջյան Սարգիս (Խանդոյից), անհայտ:

Նստած են՝ Գալստյան Երջանիկ, Խուղավերդյան Մկրտիչ, Ալեկաշվիլի Այոռա (Կոթեղիայից): գ. Բեժանո: 1951 թ.:


Բեժանոյի անվանիները

Բեժանոյում են Տնայել

փիլիսոփայական գիտ. դոկտոր Վլադիմիր (Վոլոդյա) Ցոլակի Խուդավերդյանը, տեխնիկական գիտ. դոկտոր Սուրիկ (Սուրեն) Խաչիկի Խուդավերդյանը, տեխնիկական գիտ. թեկնածու Իվան Խաչատուրի Սուլադյանը, բժշկական գիտ. թեկնածուներ Ռաֆայել Գրիգորի Չարչյանը և Տիգրան Շոթայի Սահակյանը, գյուղատնտեսական գիտ. թեկնածուներ Վարշամ Գալուստի Խանսուլյանը և Խաչատուր Սահակի Ստեփանյանը, լեզվաբան, բառարանագիր և մանկավարժ Գրիգոր Խաչատուրի Վանցյանը, ՎՀ ՁՈւ գնդապետ Պետրոս Կիմի Մանուկյանը, ԼՂՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանակիր Սերգեյ (Սեյրան) Լորենցի Վանցյանը, 1938-47 թթ. ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության քարտուղար Հրաչյա Արշակի Գալստյանը, «Ձավախք» հանրագիտարանի խմբագիր և այս հանդեսի խմբագիր Սերգեյ (Արա) Ալյոշայի Խուդավերդյանը, ՀՀ լրագրողների միության անդամ Մեսրոպ Գրիգորի Սահակյանը, նկարչուհի, ՌԴ Թաթարստանի Հանրապետության նկարիչների միության անդամ Ադունիկ Ժորժիկի Թամամյանը

Բեժանոցու ժառանգ են ՌԴ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, բժշկական գիտ. դոկտոր Էդուարդ Ռաֆայելի Չարչյանը, բժշկական գիտ. դոկտոր Դենիս Սոսի Սարգսյանը, ԽՍՀՄ ավիացիայի վաստակավոր գործիչ Լավրենտի Նեստորի (Մեսրոպի) Մկրտչյանը, ԽՍՀՄ լրագրողների միության անդամ Ավթանդիլ Գարեգինի Գրիգորյանը, տեխնիկական գիտ. թեկնածուներ Աշոտ և Դավիդ Սուրիկի Խուդավերդյանները, Նանե Արմենի Խուդավերդյանը, Տիգրան Լյուդվիգի Պետրոսյանը, նրա զավակը՝ քաղաքագիտության թեկնածու Դավիթ Տիգրանի Պետրոսյանը, բժշկական գիտ. թեկնածու Արտակ Կարապետի Գրիգորյանը, բանասիրական գիտ. թեկնածու Նաիրա Իլյուշի Թամամյանը, տնտեսական գիտ. թեկնածու Արթուր Շալիկոյի Քցյանը, աշխարհագրական գիտ. թեկնածու Աիդա Նարիմանի Համազարյանը, մանկավարժական գիտ. թեկնածուներ Ելենա Հրաչյայի Գալստյանը և դուստրը Սոֆյա Կարենի Քալանթարը, գնդապետ Սեյրան Սպանդարի Ղազարյանը:

Ունեցել ենք նաև հայտնի հարսներ մեր գյուղում, նրանցից մեկը՝ ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության քարտուղար Հրաչյա Գալստյանի կինը՝ կենսաբանական գիտ. դոկտոր Սոֆյա Յակովի Ջուրտնիցկայան և բանասիրական գիտ. թեկնածու Անահիտ Արշակի Խուդավերդյանը:



Վանցյան Գրիգոր Խաչատուրի

1870 – 1908

Լեզվաբան, բառարանագիր,
գրաքննադատ, մանկավարժ

Ծնվել է 1870 թ. փետրվարի 21-ին Ախալքալաքի շրջանի Բեժանո գյուղում:

Նախնական կրթությունն ստացել է գյուղի սբ. Մինասի արական մեկդասյա եկեղեցական-ծխական դպրոցում: 1885–90 թթ. սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, 1895 թ.՝ Բեռլինի համալսարանում:

Հայոց լեզու է դասավանդել Ախալքալաքում և Թիֆլիսում:

Գրել է գրաքննադատական հոդվածներ, կազմել այբբենարան:

Առավել ուշագրավ են գրպանի ուղղագրական բառարանը և հայոց լեզվի տարրական դասընթացը, որոնք ունեցել են մի քանի հրատարակություն: «Պատմական քերականութիւն արեւելահայ լեզուի» (1906 թ.) աշխատության մեջ անդրադարձել է ժամանակի լեզվաբանական և հայրենագիտական հարցերի, քննարկել հայերենի ցեղակցության, արևելահայ գրական լեզվի և բարբառների փոխհարաբերության խնդիրները, գրական արևելահայերենի ձևավորման գործընթացը:

1894–ին, Գ. Վանցյանը հրապարակում է բոշաների մասին իր անտիպ աշխատության մի նոր հատված՝ «Պատմական ակնարկ բոշաների անցյալից» խորագրով, ուր հեղինակը անդրադառնում է այդ ժողովրդի անվան, ծագումնաբանական, Հայաստան մուտքի և զբաղեցրած բնակավայրերի, նաև քրիստոնեանալու խնդիրներին:

1890–ից մինչև 1900 թ. սկզբներին Գ. Վանցյանը լեզվաբանությանը վերաբերող հոդվածներ է հրապարակել «Մուրճ» (Թիֆլիս), «Հանդէս ամսօրեայ» (Վիեննա), «Անահիտ» (Փարիզ) և այլ հանդեսներում, 1900–1901 թթ. հոդվածներ, գրախոսականներ և ակնարկներ է գրել Թիֆլիսի «Տարագ» հանդեսում, իսկ 1904–1905 թթ. Թիֆլիսի «Լույս» ամսագրում հրապարակել է երեք աշխատանք, որոնցից երկուսը լեզվաբանական են «Նյութեր հայերենի մշակության համար», («Լույս», 1904, №5, էջ 180–184), «Հայերենը մշակելու նյութեր», («Լույս», 1905, №1, էջ 101–104), մեկը՝ իմաստասիրական բնույթի. «Փիլիսոփայական զրույցներ» («Լույս», 1904, №1, էջ 94–110):

Ինքնասպանություն է գործել 1908 թ. մայիսի 5–ին Թիֆլիսում և թողած նամակում խնդրել է իր մահվան համար որևէ մեկին չմեղադրել:

Հուղարկավորվել է մայիսի 9–ին: Աճյունն ամփոփված է Թիֆլիսի հայ մշակույթի գործիչների հոջիվանքի պանթեոնում:



Գալստյան Հրայա Արշակի

1899 – 1986

Քաղաքական,
հասարական գործիչ

Ծվել է 1899 թ. հունիսի 1–ին Բեժանոյում: 1909–10 թթ. սովորել է գյուղի երկդասյա դպրոցում, ապա ուսումը շարունակել Ախալքալաքի քաղաքային դպրոցում, 1916 թ. տեղափոխվել է Թիֆլիսի Մշակութա–տեխնիկական դպրոց:

1921 թ. ավարտելով այդ դպրոցը՝ անցել է կոմերիտական աշխատանքի և եղել է Բարալեթի ԼԿԵՄ քարտուղար:

1922 թ. ընդունվել է Թբիլիսիի պոլիտեխնիկական ինստիտուտի գյուղատնտեսական ֆակուլտետը: 1927 թ. ավարտելով ինստիտուտը՝ որպես ագրոնոմ գործուղվել է Ախալքալաքի գավառ: 1928 թ. նշանակվել է Ախալքալաքի գավառի գործադիր կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար, իսկ 1929–ից մինչև 1930 թ. վերջը՝ Գավկոմի նախագահ: 1930–31 թթ. աշխատել է Անդրկովկասի սպառողների միության կոոպերացիայում:

1931–33 թթ եղել է ԽՍՀՄ գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի Անդրկովկասյան մասնաճյուղի գիտքարտուղարը, 1933–35 թթ.՝ Ախալքալաքի շրջգործկոմի նախագահը:

1935 թ. սեպտեմբերից աշխատանքի է անցել ՀԽՍՀ Կոմկուսի Կենտկոմի գյուղատնտեսական բաժնում՝ որպես հրահանգիչ: 1937 թ. հոկտեմբերից 10–ից մինչև 1938 թ. եղել ՀԽՍՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի քարտուղար, 1938–ից մինչև 1946 թ. նոյեմբերը՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության քարտուղար: 1947–53 թթ. եղել է ՀԽՍՀ պետական վերահսկողության մինիստրության հացամթերքների վերահսկողության ավագ վերահսկիչ, խմբի պետ: Այնուհետև, մինչև կենսաթոշակի անցնելը, 16 տարի անընդմեջ (1953–1969 թթ.) ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի քարտուղարության վարիչն էր:

Հրայա Գալստյանը երկու անգամ ընտրվել է ՀԿԿ Կենտկոմի անդամ, 1938 թ.՝ ՀԽՍՀ ԳԽ պատգամավոր: 1940 թ. պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով: Մահացել է 1986 թ. հունվարի 13–ին Երևանում:



**Մկրտչյան Լավրենտի
Մեսրոպի (Նեսպորի)**

1935 – 2000

ԽՍՀՄ քաղաքացիական
ավիացիայի վաստակավոր գործիչ,
Տաշքենդի պատվավոր քաղաքացի

Ծնվել է 1935 թ. հոկտեմբերի 10-ին Սամտրեդիա քաղաքում բեժանոցու ընտանիքում: Ավարտել է Ռիգայի ավիացիոն ուսումնարանը, Կիևի քաղաքացիական ավիացիայի ինստիտուտը, իսկ 1963 թ. Սանկտ Պետերբուրգի քաղաքացիական ավիացիայի ակադեմիայի բարձրագույն հրամանատարական ֆակուլտետը:

1956-ից աշխատել է Վրաստանի քաղաքացիական ավիացիայի միավորման համակարգում: 1963–75 թթ. եղել է Թբիլիսիի օդանավակայանի փոխադրամների բաժնի պետ, ապա՝ ավիաձեռնարկության հրամանատարի առաջին տեղակալ: 1986–91 թթ. վարել է Վրաստանի քաղաքացիական ավիացիայի փոխադրամների բաժնի պետի պաշտոնը: Հետխորհրդային տարիներին եղել է Վրաստանի քաղաքացիական ավիացիայի վարչության տնտեսական կրթության խմբի ղեկավար, հսկման և ստուգման բաժնի պետ:

Նրա համահեղինակությամբ 1979 թ. լույս է տեսել խորհրդային ավիացիայում օգտագործվող եզակի "Руководство по обслуживанию пассажиров на воздушных линиях Союза ССР" ձեռնարկներից մեկը:

Լ. Մկրտչյանի մասնակցությամբ Վրաստանում հիմնադրվել են առաջին մասնավոր «ORBI» և «Air Biseka» ավիաընկերությունները:

Լ. Մ. Մկրտչյանը հետխորհրդային շրջանում ավիաընկերությունների միջև նոր հարաբերություններ հաստատող Միջազգային տրանսպորտային պալատի ստեղծողներից էր, այդ հարաբերությունները վերահսկող և կարգավորող խորհրդի անդամ և Վրաստանում Միջազգային Տրանսպորտային պալատի մշտական ներկայացուցիչը:

Լ. Մկրտչյանին 1980 թ. շնորհվել է ԽՍՀՄ քաղաքացիական ավիացիայի վաստակավոր գործչի կոչում:

Մահացել է 2000 թ. հոկտեմբերի 9-ին Թբիլիսիում:



Մանուկյան Պետրոս Կիմի

1952 – 2004

Օդաչու,
ՎՀ զինված ուժերի գնդապետ

Ծնվել է 1952 թ. հունիսի 1-ին Բեժանո գյուղում: 1969 թ. ավարտել է Բեժանոյի միջնակարգ դպրոցը: 1969–71 թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

1971–1973 թթ. սովորել է Կրասնակուտի ավիացիոն ուսումնարանում, ավարտելուց աշխատանքի անցել Ուզբեկական ԽՍՀ Նուկուս քաղաքի օդանավակայանում իբրև ուղղաթիռի հրամանատար:

1975 թ. տեղափոխվել է Թբիլիսի և աշխատել օդանավակայանում՝ որպես ուղղաթիռի հրամանատար, միաժամանակ ծառայելով նորանկախ ՎՀ զինված ուժերում:

1998 թ. լինելով ՎՀ նախագահի ուղղաթիռի հրամանատար՝ ապրիլին Աբխազիայում փրկել է Վրաստանի նախագահ Է. Շևարձնաձեի կյանքը՝ նախագահի հրամանագրով անբասիր զինվորական ծառայության համար պարգևատրվել է «Վախթանգ Գորգասալ» մեդալով:

Կյանքից վաղաժամ հեռացել է 2004 թ. հունիսի 21-ին Թբիլիսիում, թաղված է հայրենի գյուղի գերեզմանոցում:



Թամամյան Աղունիկ Ժորժիկի

Ծնվել է 1952 թ.

Նկարչուհի (գրաֆիկա, քանդակագործություն),
Թաթարստանի Հանրապետության
նկարիչների միության անդամ

Ծնվել է 1952 թ. փետրվարի 22-ին (ըստ անձնագրի՝ 28) Բեժանոյում: 1959–1969 թթ. սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում:

1971–1973 թթ. սովորել է Երևանի գեղարվեստի ուսումնարանում, 1977–1981 թթ. Երևանի Խ. Աբովյանի անվ. հայկական մանկավարժական ինստիտուտի նկարչա–գծագրական ֆակուլտետի նկարչության և գծագրության բաժնում:

Ուսումնարանը ավարտելուց հետո՝ 1973–76 թթ. դասավանդել է Քարսեպի միջնակարգ դպրոցում, իսկ բուհն ավարտելուց հետո 1981–1984 թթ. աշխատել է Աշտարակի №2 դպրոցում՝ որպես նկարչության և գծագրության ուսուցչուհի:

1986 թ. տեղափոխվել է մշտական բնակության ՌԴ Թաթարստանի Հանրապետության Լենինոգորսկ քաղաք:

1986–87 թթ. աշխատել է մշակույթի տանը՝ որպես նկարիչ–ձևավորող:

1987–ից մինչև 2016 թ. աշխատել է Լենինոգորսկի մանկական արվեստի դպրոցում՝ որպես նկարչության և գեղանկարչության ուսուցչուհի:

2013 թ–ից ՌԴ Թաթարստանի Հանրապետության նկարիչների միության անդամ է:

Մասնակցել է տարածաշրջանային, հանրապետական, ռուսաստանյան և միջազգային բազմաթիվ ցուցահանդեսների:

1982 թ. Երևանում ունեցել է անհատական ցուցահանդես:

2012 թ. Լենինոգորսկում տեղադրվել է նրա Չեռնոբիլի աղետին և Աֆղանական պատերազմին նվիրված հուշարձանները:

Նկարչուհու անձնական գործերը հիմնականում պահպանվում են Թաթարստանի պետական թանգարանում և պատկերասրահում, ինչպես նաև մասնավոր հավաքածուներում:



Համազարյան Աիդա Նարինյանի

Ծնվել է 1963 թ.

Մանկավարժ, դասախոս,
աշխարհագրական
գիտությունների թեկնածու

Ծնվել է 1963 թ. ապրիլի 16-ին Գումբուրդո գյուղում. Բեժանոյից Դավնիա տեղափոխված Ղազարյան Լևոնի թոռնուհին է:

1970–1980 թթ. սովորել է Գյումրու №5 և №32 դպրոցներում:

1982–1987 թթ. սովորել է ԵՊՀ աշխարհագրական ֆակուլտետում, 2007–2012 թթ.՝ ԳՊՄԻ ասպիրանտուրայում:

2013 թ. ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտում պաշտպանել է «Հայաստանի Հանրապետության գետերի կոշտ հոսքի տարածաժամանակային բաշխման օրինաչափությունները» թեմայով ատենախոսություն և ստացել աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2018 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

Ա. Համազարյանը 1987–1990 թթ. դասավանդել է Գյումրու №22 միջնակարգ դպրոցում, իսկ 1990–ից մինչև օրս աշխարհագրություն է դասավանդում №40 միջնակարգ դպրոցում:

1997–ից Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի աշխարհագրության ամբիոնի դասախոս է, իսկ՝ 2017–ից աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի ասիստենտ:

Աիդա Համազարյանի գիտական աշխատանքները նվիրված են բնապահպանությանը, զբոսաշրջությանը, ջրաբանությանը, օդերևութաբանությանը, ինտեգրացված ուսուցման, դպրոցական դասագրքերի և ուսումնառության նոր մեթոդների վերլուծության և ուսուցման խնդիրներին:



Խուղավերդյան Սերգեյ Ալյոշայի

Ծնվել է 1973 թ.

«Ջավախք» հանրագիտարանի
հեղինակ և խմբագիր,
Ջավախքի համացանցային հանգույցի սեփականատեր

Ծնվել է 1973 թ. մայիսի 28–ին Ախալքալաքի շրջանի Բեժանո գյուղում, ուսուցչի ընտանիքում: 1981 թ. հաճախել է նույն գյուղի միջնակարգ դպրոցի առաջին դասարան:

1987–1991 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի մեխանիկա–մաթեմատիկական ֆակուլտետին կից հեռակա–մաթեմատիկական դպրոցում:

1988 թ. ապրիլից մինչև 1991 թ.՝ կոմերիտմիության լուծարումը, եղել է դպրոցի ԼԿԵՄ առաջին քարտուղար:

1988 թ. սեպտեմբերից մինչև դեկտեմբեր սովորել է Երևանի պետական համալսարանին կից ակադ. Ա. Շահինյանի անվան №1 ֆիզիկա–մաթեմատիկական գիշերօթիկ դպրոցում:

1991 թ. ավարտել է Բեժանոյի միջնակարգ դպրոցը:

Նույն թվականին ընդունվել և 1996 թ. ավարտել է Երևանի Ա. Շիրակացու անվան միջազգային հարաբերությունների համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը՝ տնտեսագետ–միջազգայնագետի մասնագիտությամբ:

Ավարտելուց հետո 1998–1999 թթ. աշխատել է «Հայէկոնոմբանկ»–ում:

1996–ից զբաղվել է գիտական գործունեությամբ, հիմնականում Ջավախքի մասին նյութերի հավաքմամբ: 1988–ից նախաձեռնել է «Ջավախք» համապարփակ՝ «ունիվերսալ» բնույթի ակադեմիական հանրագիտարանի հրատարակումը, 2002–ից դրա հեղինակն է և գլխավոր խմբագիրը:

2003–2007 թթ. համատեղության կարգով եղել է նաև «Հայկական հանրագիտարան. հրատարակչության» համացանցային ծառայության պատասխանատու:

2007–ից մինչև օրս Ջավախքի համացանցային հանգույցի սեփականատերն է:



Սահակյան Տիգրան Շիրակի

Ծնվել է 1976 թ.

Ատամնաբույժ,
բժշկական
գիտությունների թեկնածու

Ծնվել է 1976 թ. սեպտեմբերի 6-ին Բեժանոյում: 1983–1993 թթ. սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում:

1994–1997 թթ. սովորել է Յակուտսկի բժշկական քոլեջում, 1997–2002 թթ. Սախա–Յակուտիայի Հանրապետության Մ. Կ. Ամնոսովի անվան հյուսիս–արևելյան դաշնային համալսարանի ստոմատոլոգիական ֆակուլտետում: 2003–2004 թթ. ուսումը շարունակել է Մոսկվայի Ա. Ի. Եվրոկիմովի անվան պետական բժշկա–ստոմատոլոգիական համալսարանի ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելման (թերապևտիկ ստոմատոլոգիա) ամբիոնի կլինիկական օրդինատուրայում:

2004–2007 թթ. սովորել է նույն հաստատության ամբիոնի ասպիրանտուրայում:

2009 թ. պաշտպանել է «Սեռական հասունության շրջանում երեխաների ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելման հիմնավորումը» թեմայով ատենախոսություն՝ ստանալով բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2002–ից աշխատում է Մոսկվայի Ն. Ֆ. Ֆիլատովի անվան №13 մանկական քաղաքային կլինիկական հիվանդանոցի ստոմատոլոգիայի բաժնի վարիչ, ինչպես նաև գլխավոր բժիշկ Մոսկվայի ST ստոմատոլոգիական կլինիկայում:

2007–ից Մոսկվայի պետական բժշկա–ստոմատոլոգիական համալսարանի ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելման ամբիոնի դասախոս է:



Գրիգորյան Արտակ Կարապետի

Ծնվել է 1981 թ.

Վնասվածքաբան,
բժշկական
գիտությունների թեկնածու

Ծնվել է 1981 թ. հունվարի 15-ին Երևանում՝ բեժանցու ընտանիքում: 1987–1988 թթ. սովորել է Երևանի №170, 1988–1997 թթ.՝ Գևորգ Չաուշի անվան №188 դպրոցում:

2003 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի բուժական ֆակուլտետը: 2003–2005 թթ. սովորել է Մոսկվայի Ի. Սեչենովի անվան բժշկական ակադեմիայի (այժմ՝ Մոսկվայի Ի. Մ. Սեչենովի անվան առաջին պետական բժշկական համալսարան) վնասվածքաբանության, օրթոպեդիայի և արտակարգ իրավիճակների ամբիոնի օրդինատուրայում՝ ստանալով վնասվածքաբան–օրթոպեդի որակավորում:

2005–2008 թթ. մասնագիտական կրթությունը շարունակել է նույն բուհի ասպիրանտուրայում, 2008 թ. պաշտպանել է «Ուղքի կոճերի բազմաբեկոր կտորվածքների վիրահատական բուժումը» թեմայով ատենախոսություն՝ ստանալով բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2008–2010 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում (Վարդենիսի կայազորային հոսպիտալում՝ որպես վնասվածքաբան–օրթոպեդ):

2011 թ. փետրվարից Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի վնասվածքաբանության և օրթոպեդիայի ամբիոնի դոցենտ է, հաստատության հիվանդանոցային համալիրի վնասվածքաբանության և օրթոպեդիայի բաժանմունքի բժիշկ օրդինատոր:

2013–2018 թթ. եղել է ՀՀ արդարադատության նախարարության Դատապարտյալների հիվանդանոց ՔԿՀ-ի կոնսուլտանտ, իսկ 2015–2017 թթ.՝ ՀՀ ՊՆ կենտրոնական բժշկական հանձնաժողովի բժիշկ–փորձագետ:

Արտակ Գրիգորյանը 12 գիտական հոդվածների և 1 մեթոդական ձեռնարկի համահեղինակ է:

ՀՀ վնասվածքաբանների և օրթոպեդների ասոցիացիայի անդամ է:



Չոլոտնիցկայա Սոֆյա Յակովի

1906 – 1968

Բուսաբան,
կենսաբանական գիտությունների դոկտոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր

Ծնվել է 1906 թ. մարտի 17-ին Սևաստոպոլում՝ դեղագործի ընտանիքում: 1927 թ. ավարտել է Թբիլիսիի պոլիտեխնիկական ինստիտուտի գյուղատնտեսական ֆակուլտետը:

Սոֆյա Յակովլևնա Չոլոտնիցկայան 1928 թ. ամուսնացել է բեժանոցի քաղաքական գործիչ Հրայա Գալստյանի (1901–1986 թթ.) հետ:

1932–1936 թթ. սովորել է Լենինգրադի բուսաբուծության համամիութենական ինստիտուտի ասպիրանտուրայում ակադեմիկոս Ն. Վավիլովի անմիջական ղեկավարությամբ: 1937 թ. պաշտպանել է «Անդրկովկասի աշնանացան ցորենի լավագույն սորտերը» թեմայովատենախոսություն, որի համար նրան շնորհվել է գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1958 թ. ԽՍՀՄ ԳԱ Վ. Կոմարովի անվան բուսաբանական ինստիտուտում (Լենինգրադ) պաշտպանել է ատենախոսություն՝ «Հայկական բուսական աշխարհի դեղաբույսերի ռեսուրսները» թեմայով և դարձել կենսաբանական գիտությունների դոկտոր:

Ինստիտուտն ավարտելուց հետո գործուղվել է Ախալքալաքի շրջան: 1927–1931 թթ. եղել է Վրաստանի կենտրոնական սելեկցիոն կայանի հենակետի և փորձադաշտի վարիչ: 1942–ից մինչև 1968 թ. աշխատել է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի բուսաբանության ինստիտուտում, կազմակերպել և ղեկավարել է բուսաբանական ռեսուրսների լաբորատորիան:

Նա հեղինակ է 42 գիտական աշխատությունների և երկու մենագրությունների, հիմնականում ուսումնասիրել է բույսի հումքի ռեսուրսները՝ հատկապես կարևորելով դեղաբույսերի և վիտամինային բույսերի հայտնաբերումը, ինչպես նաև բույսերի ֆիզիոլոգիական ակտիվ նյութերի օրինաչափ փոփոխությունները:

Ս. Յ. Չոլոտնիցկայան հետազոտել է Հայաստանի ֆլորայի մոտ 1700 տեսակ՝ ալկալոիդների պարունակությունը պարզելու համար, և հայտնաբերել է ավելի քան 50 նոր ալկալոիդակիր:

Եղել է Հայկական ԽՍՀ մի շարք գիտական խորհուրդների և գիտական միությունների անդամ:

Մահացել է 1968 թ. հունիսի 29-ին Երևանում:

Չյուղացիների բառ ու պաշարից

ԲԵՃԱՆՈՅԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԱՌԱՆ

Աբրեշուն - մետաքս

Ալաճա - խատուտիկ, ծաղկավոր, խայտաբղետ

Առկա - ատամ

Բիրատի - բոլորը

Բոբլիկ - ոտաբոբիկ

Գեզաթ էնել - ճամփա պահել, մեկին սպասել, դիտել

Գեշ - տգետ

Գողտուցի - թաքուն, գաղտնի

Դեշակ - ներքնակ

Դիլիմ - մի փոքր կտոր, մաս

Զընջիլ - շղթա

Զիան - վնաս

Էլօղլի - ուրիշի տղա, օտար, ոչ հարազատ

Թաբաղ - ափսե

Թեշիկ - իլիկ

Իթի - հարդուկ

Լախանա - կաղամբ

Լըգըզ - արագիլ

Խըզմըթ - ծառայություն

Խընդալ - ծիծաղել

Կըռնակ - մեջք

Հըջըթ - գործիք

Ձիք - ամուր, պինդ

Ղարաղոլ - պահակ

Մըսխուզ - դիտմամբ

Յազըղ - ննջասենյակ

Շամառ - ապտակ

Չվան - պարան

Սոխախ - փողոց

Օրբևարի - այրի կին

Գյուղում փարամժված ազգային կերակուրները

ԱՎԵԼՈՒԿԵ ԲՍԼԳՍԻ – Չորացրած ավելուկին խառնում էին բլղուր և այլուրե խյուս, դրանից հետո եփում, վրան ավելացնում սոխառած և ուտում:

ԲՈՐՍԵԻ – Բազուկի կամ ճակնդեղի տերևները խաշում են, ապա քանում, լցնում թավայի մեջ, յուղով տապակում, վրան ավելացնում սխտորով մածուն և մատուցում:

ԲԼՂԻՆ ՍՊՈՐ – Նախօրոք թրջած բլղուրը եփում էին եռացրած ջրում, մի քիչ խյուս անում, փոքրիկ գնդիկներ պատրաստում ու լցնում եռացրած սովորական ջրի կամ թթվաջրի մեջ: Վրան ավելացնում սոխառած և կանաչիներց ավելացնում չորացրած ցետրոն (ուրց, ծոթրին):

ԷՐԻՇԵՍ (Արիշտա) – Այլուրից պատրաստում են խմոր, մեջը ավելացնելով աղ և ձու, խոնջայի վրա գրտնակով տափեկացնում են, որոշ ժամանակ փռում են սրբիչի վրա: Դրանից հետո կլոր լավաշանման խմորը կտրատում են երկար թելերի նման՝ մինչև կես սմ հաստությամբ: Մի քանի ժամ թողնում են, որ այն չորանա, դրանից հետո թոնրատանը կամ առարանում բովում են մինչև կարմրելը: Էրիշտայով պատրաստում են ապուր կամ բրնձի հետ փլավ:

ԲՍԼՈՎ ՍՊՈՐ – Եփում են թանով կամ մածունով, պատրաստում են այլուրով խյուս, մեջը լցնում են ցորենի հատիկները կամ կորկոտ, որն անվանում են ակ: Եփելուց այն անընդհատ խառնում են, որ չկտրվի: Գյուղացիները թանով ապուրին երբեք սպաս չեն ասել:

ԽՍՇԻԼ – Խաշիլը եփում էին միայն ցորենի բլղուրից: Բլղուրը եփում էին եռացրած ջրում՝ մինչև թանձրանալը, վրան ավելացնում յուղ, ոտելիս խառնում էին կաթ և ճաշակում:

ՉՐԻՍՇ – Ամանի մեջ ջուր են լցնում, եռացնում, ապա եռացրած ջրի մեջ այլուր լցնում ու խառնում, որ այլուրը ամանի հատակին կամ պատերին չկպչեր, չխանձրհամեր: Եփում են մինչև թանձրանալ-պնդանալը: Լցնում են ամաների մեջ, վրան ավելացնելով յուղ:

Զանազան

Գյուղացիները հիմնականում զբաղվում են հողագործությամբ, անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, դաշտավարությամբ՝ մշակելով կարտոֆիլ, գազար, ցորեն, գարի, վիգ, կտավատ, վարսակ, կորնգան, գետնախնձոր:

Բանջարաբոստանային մշակաբույսերից մշակում են նաև կաղամբ, բազուկ, բողկ, շաղգամ, լոլիկ, վարունգ, սմբուկ, արևածաղիկ, եգիպտացորեն, ռեհան, կարմիր և սպիտակ ճանկնդեղ, մաղադանոս, թարխուն, համեմ, սամիթ, կոտեմ, լոբի, սոխ, սխտոր, սպանախ, տաքդեղ, թութուն, դդում, բակլա, ծաղկակաղամբ,:

Մրգատու ծառերից են տանձենին, խնձորենին, սալորենին (ջանջուլ, դամբուլ), կեռասենին:

Գյուղում պահում են կով, ոչխար, խոզ, ձի, գոմեշ, այծ, էշ, ճագար, շուն, կատու:

Թռչուններից պահում են հավ, սագ, բադ, հնդկահավ, աղավնի, իսկ բնության մեջ հանդիպում են արագիլ, ճնճղուկ, կաքավ, ծիծեռնակ, սարյակ, չղջիկ, լոր, բագե, ուրուր, արծիվ, անգղ, ագռավ, կաչաղակ, հոպոպ, դեզձանիկ, արտույտ, կկու, բու: Լինում են նաև չվերթից կանգառող կռունկներ:

Կենդանիներից գյուղամերձ բնության մեջ հանդիպում են՝ գայլ, աղվես, վայրի կատու (լուսան), նապաստակ, մուկ, ոզնի, փորսուղ, կզաքիս, առնետ, աքիս: 1950–ական թվականներին երևացել է նաև եղնիկ:

Գյուղի գետում և արհեստական լճակներում ձկնատեսակներից կան կարմրախայտ (ալա), սիգ, գետածածան (կա նաև՝ լճածածան), խրամուկ, յուրահատուկ մանրածուկ՝ ոյաբուշկա, խեցգետին: Խոնավ վայրերում շատ են գորտերը (նաև՝ դողոշ):

Սողուններից երբեմն հանդիպում են մողես և օձ:

Գյուղի դաշտերում աճում են անթառամ ծաղիկ, չաթլանդունջ, ավել, դևի ծաղիկ, հելելի սապոն, խնկածաղիկ, դեղին ծաղիկ, խաշխաշ, կուժկուտրուկ, ճնճաղիկ, կակաչ, սոլոբուր, փուշ, մանուշակ, մեխակ, օձի պատատուկ (լոշտակ), սուսամբար, զանգակ, լալա, ճարճատուկ, եզան լեզու (ջրախոտ), կոճղես, խաշխաշ, ծիթոն (ուրց, ծոթրին), քունջուր, ադուլ:

Խոտաբույսերից շատ են հանդիպում կորնկա, ուրց, փետրախոտ, սիգախոտ, յոնջա (առվույտ), դմի (շուշան), գառի խոտ, դաղձ, թելբանջար, իշու կաթնուկ, կոճղեգ, մատուկ, երեքնուկ, սինձ, որձախոտ, սիբեխ, եղինջ (կձան), թելուկ, փիփերտ, ավելուկ, թրթնջուկ, երիցուկ, գետնամորի, ղնձիլ, քեղ, մանդակ, մանանեխ, խատուտիկ:

Ծաղիկներից հանդիպում են հասմիկ, մեխակ, կակաչ, սպիտակ և կարմիր վարդ, մանուշակ:

Նրանք առաջինն էին

Շրջանում առաջին ջրաղացը կառուցվել է հենց մեր գյուղում՝ 1829-ին: Գյուղի հիմնադրումից հետո մոտ 200 փարվա ընթացքում գործել են հինգ ջրաղաց և մեկ ձիթհան, որոնք ներկայումս գոյություն չունեն, վերածվել են ավերակների, գյուղի կենտրոնում պահպանվել է մեկ էլեկտրատաղաց, այն այժմ գործում է, աշխարհցնում է Մանուշակյան Արսենը (Ալեի Արսենը):

Գյուղում էլեկտրատաղաց և ջրաղացներ են ունեցել՝ Զարիկյան Վաչագանը (կոչվել է Մարոնց), Սանրաձե Արութիկը (կոչվել է Սանրաձոնց), Արզումանյան Հարությունը (կոչվել է Արզումաննց), Թովչյան Իսաիրը (կոչվել է Թովչոնց):

1925 թ-ից Բեժանոյում գործում է շրջանի առաջին յոդ-պանրի մեքենայացված գործարանը: Այն կառուցվել է Ֆիլիպ Մախարաձեի նախաձեռնությամբ:

Գործարանը արտադրում էր գլուխ պանիր, կարագ, հոլանդական, շվեյցարական պանրապեասակներ և հալոուկ պապիկերով առաքում Մոսկվա՝ ԽՍՀՄ Նախարարների խորհուրդ, ինչպես նաև Սանկր Պետերբուրգ: Գործարանի վարպետներ են եղել Լորենց Վանցյանը, Օննիկ Խոտավերդյանը, Մեխակ Յողունյանը, այնտեղ աշխատել են Շաքրո և Ալյոշա Խոտավերդյանները, Ռոբերտ Կուրդիյանը և այլք: Գործարանը որպես վառելիք օգտագործել է մագուր, հնոցպան են եղել Երվանդ Բարսեղյանը, Գրիգոր Վանցյանը, այնուհետև նրան փոխարինել է որդին՝ Արտյուշ Վանցյանը:



1921 թ. վերջին Բեժանոյում սրեղծվում է շրջանում առաջին երկրասարդական (կոմերիտական) կազմակերպությունը Հրաչյա Գալուսյանի (Գալստյան) գլխավորությամբ (հետագայում՝ 1938-47 թթ. նա դարձավ ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության քարտուղար), իսկ առաջին քարտուղար է ընտրվում Արշարույս Խաչատրյանը:

Գյուղի առաջին տրակտորիստը եղել է Մանուշակյան Վարշանը (կորել է Հայրենական մեծ պատերազմում):

Գյուղում առաջին անգամ 1933 թ. հունիսին կայծակնահարվել է Դեմերչոնց Բարդուղիմեոսի կինը՝ Փարանը, իսկ 1935 թ. հուլիսին՝ Զարիկյան Արտաշի մայրը՝ Հոհիսիկը, 1965 թ.՝ Ունանյան Զարմիկը, 1971 թ. հունիսին՝ Արզումանյան Սերժիկը:



Գյուղում առաջին մարդաբար ավտոմեքենան՝ «Մոսկվիչը», բերել է Արզումանյան Վովիկը, իսկ առաջին մասնավոր բեռնաբարը՝ Մկոյան Գալուսարը:

Գյուղում առաջին խանութը գործել է ներկայիս Լիպոնց փանը, վաճառողը եղել է Խանսուլենց Լավրենտի հայրը՝ Մարգար, իսկ դրանից հետո գյուղի կենտրոնում կառուցվեց նոր խանութ, որի վարիչը եղել է Մանուկյան Դերենիկը, վաճառողը նրա կինը՝ Ռոզան (սկսած 1956-ից մինչև 1998 թ.), նրան փոխարինել է Ունանյան Աղասիը, այդ խանութը մինչև այժմ էլ գործում է:

Գյուղի ամենաներկայակայացր առաջօր եղել է Յողունյան Գայանեն. ապրել է 101 փարի: Երկրարակյացներ են եղել՝ Յողունյան Վաչոն (1906-2012 թթ.). ապրել է 96 փարի, Վանցյան Լորենցը (1924-2019 թթ.). ապրել է 95 փարի, Զարիկյան Վաչագանը (1908-2002 թթ.). ապրել է 94 փարի, Սարգսյան Միլուշը (1929-2022 թթ.). ապրել է 94 փարի, Խոտավերդյան Եփրոսյան (1865-1958 թթ.). ապրել է 93 փարի:



Գյուղի առաջին մասնավոր բեռնատար մեքենան: Չախից աջ՝ Մկրյան Գարուս, Խուդավերդյան Այոշա, Խուդավերդյան Աշոտ, Չարչյան Վորդյա:



ԲԵԺԱՆՈ

2026 №1

Տեղեկատու–հայրենագիտական հանրագիտարանային հանդես

Հանդեսը պատմական փաստերով ներկայացնում է Վրաստանի Հանրապետության Սամցխե–Ջավախք մունիցիպալիտետի Բեժանո գյուղի անցյալը և ներկան:

Հանդեսը հրատարակելու համար ֆինանսական օգնություն ցուցաբերելու համար մեր խորին շնորհակալություն ենք հայտնում բարերար–մեկենաս՝ Սերգեյ Վանցյանին

Հանդեսի հրատարակիչ և գլխավոր խմբագիր՝ Սերգեյ Խուդավերոյան

Հանդեսի խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ Սերգեյ Խուդավերոյան
Պատասխանատու քարտուղար՝ Ալթանդիլ Գրիգորյան
Խորհրդի կազմը՝
Սերգեյ Խուդավերոյան
Սերգեյ Վանցյան
Սուրիկ Խուդավերոյան
Սեյրան Ղազարյան
Ալթանդիլ Գրիգորյան

Պատկերների մշակումը, ձևավորումը և կազմի լուսանկարը՝ Սերգեյ Խուդավերոյանի Համակարգչային շարվածքը, տեքստի հավաքումը և էջադրումը՝ Սաթենիկ Խուդավերոյանի Տեքստը շարվել է էդիկ Ղաբուզյանի «GHEA Grapalat» տառատեսակով:

Հանդեսի հասցեն՝

Հայաստան, Երևան, Բագրատունյաց պողոտա, շենք 8, բն. 37, հեռ. 055–510130, 091–510130
<https://www.javakhk.am/>

E-mail: hanragitaran@mail.ru

Հանձնված է շարվածքի 15.02.2026

Ստորագրված է տպագրության 26.02.2026

Չափսը՝ А5 – 70×100 1/16, թուղթը՝ օֆսեթ, 3 տպագր. մամուլ:

Գինը՝ պայմանագրային:

Տպագրվել է «ՉարտՊրինտ» տպարանում:

Տպաքանակը՝ 50 օրինակ

Մեսրոպ Գրիգորի Սահակյան

(04.10.1946 – 01.09.2019)

ԽՍՀՄ լրագրողների
միության անդամ

ԿԱՐՈՏ

Կարոտել եմ այն գյուղին՝ մեր,
Նրա ամեն մի խրճիթին,
Թունրի ծխին՝ ելսող դեպ վեր
Եվ գիշերին զով ու մթին:
Կարոտել եմ Արուսի ծեր,
Մանկությանս գիծ օրերին,
Հավերժահոս ջրերին մեր,
Ինձ հին ծանոթ խոր ձորերին:
Կարոտել եմ գեպի ունեղին՝ զով,
Մեր սարերին թեթև շոյող,
Եվ երկնքին թովիչ ու մով,
Ու քեզ՝ անձայն հայրենի հող:
Կարոտել եմ իմ մանկության՝
Գիծ մանկության օրրանին այն,
Որբուկ ծավել մեծացել եմ՝
Հայրենի փսն օջախին այն:

1964թ.

Գյուղի խորհրդանիշ
«Զարթոնք» (երկնյուղ)